AZG NEW PDF.qxd 01/04/2010 23:38 Page 1

Ազգ Azg

2 ԱՊՐԻԼ 2010 ՈՒՐԲԱԹ 58 (4438)

ISSN: 1829-1651

# Հայ եւ թուրք մտավորականների հանդիպում ապրիլի 24-ին Անկարայում

Hurriyet-ի տեղեկացմամբ` ապրիլի 24-ին հայ եւ թուրք մտավորականները կհանդիպեն Թուրքիայի մայրաքաղաքում երկու երկրների միջեւ երկխոսություն ծավալելու նպատակով: Ըստ պարբերականի` մտավորականները կքննարկեն նաեւ Հայոց ցեղասպանությանն առնչվող հարցեր: Երկօրյա հանդիպման կազմակերպիչը Անկարայի մտքի ազատության կենտրոնի նախաձեռնությունն է: Միջոցառման մասնակիցների թվում են գրող, լեզվաբան Սեւան Նշանյանը, ԱՄՆ-ում հրատարակվող Armenian Weekly շաբաթաթերթի խմբագիր, լրագրող Խաչիկ Մուրադյանը, գրող իրավապաշտպան Սաիթ Չեթինը, քաղաքագետ Բասկին Օրանը:

«Հավատում ենք, որ երկու ազգերի միջեւ առկա խնդիրը կարող է լուծվել միայն երկխոսության ճանապարհով: Հարցերը, որոնք առաջին հերթին վերաբերում են մեզ, քննարկվում են այլ տերությունների մայրաքաղաքներում, որովհետեւ մենք չենք կարողանում դրանք քննարկել: Արեւմուտքի անկեղծությունն այս հարցում կասկածելի է, իսկ Թուրքիան ժխտողական քաղաքականություն է որդեգրել», ասել է միջոցառման կազմակերպիչներից **Սաիթ Չեթինը**:

Հ. Հ.

# Կլինի՞ արդյոք Հայաստան-Թուրքիա հանդիպում Վաշինգտոնում

## *ԱՄՆ-ը «համոզել է» Թուրքիային` մասնակցել միջուկային անվտանգության գագաթաժողովին*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ապրիլի 24-ը մոտենում է, այդ համատեքստում ավելի ինտենսիվանում են հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացին առնչվող կամ անուղղակի կապ ունեցող իրադարձությունների հոլովույթն ու քննարկումները: Հայաստանի, Թուրքիայի նախագահների եւ այլ պաշտոնատար անձանց հանդիպումների, օրակարգային քննարկումների, անգամ ելույթների հիմնական բաղկացուցիչ է մնում ներկա իրավիճակը, որ ավելի պարզ արտահայտվելու դեպքում հայտնի «լինել-չլինելու» արտահայտության տոկոսային հարաբերակցության հետ լիովին համահունչ է:

Միացյալ Նահանգների մայրաքաղաքում ապրիլի 12-13-ին տեղի է ունենալու միջուկային անվտանգությանը նվիրված գագաթաժողով, որին մասնակցության հրավեր ԱՄՆ նախագահից ստացել է ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի նախագահը: Հայաստանի նախագահի գրասենյակն արդեն իսկ հայտարարել է, որ Սերժ Սարգսյանը կմասնակցի գագաթաժողովին: Իսկ թե այդ քննարկման շրջանակներում տեղի կունենա՞ Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների հանդիպում` դեռեւս հայտնի չէ, սակայն երկկողմ եւ այլ հանդիպումներ նախատեսվում են:

Թուրքիայի պարագայում, թուրքական դիվանագիտության իրապես «լավագույն» ավանդույթների համաձայն, թուրքական իշխանությունները չեմուչում են անում` դեռեւս հստակություն չհաղորդելով հարցին, թե արդյոք միջուկային անվտանգության գագաթաժողովին մասնակցելու կմեկնի՞ նաեւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Ավելի ճիշտ կլինի ասել, որ թուրքական իշխանությունները հետուառաջ են անում, քանի որ ամենայն հավանականությամբ, գրեթե հավաստիաբար, Էրդողանը մեկնելու է Միացյալ Նահանգներ` գոհացնելու ԱՄՆ նախագահ Օբամայի փափագը:

Տես էջ 3

# ԿԱՐԾԻՔՆԵՐ

# Ի՞նչ է սփյուռքի հետ երկխոսելու թուրքական առաջարկի ենթատեքստը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին շաբաթը Թուրքիո կառավարական շրջանակներն անընդհատ փողհարում են, որ իրենք ուզում են երկխոսել Հայոց սփյուռքի հետ: Այսպիսի հայտարարությունները չեն կարող կասկածանքի սերմեր չցանել թ՛ւ Հայաստանի, թ՛ւ Սփյուռքի մտածող մարդկանց մտքում, թե ինչո՞ւ է Թուրքիան իր ձեռքը գցում է փրփուրներին` մեր Սփյուռքի հետ է ուզում բանակցել: Հայոց ցեղասպանության վերջին շաբաթների ճանաչումները ցայտնոտի մեջ են գցել թուրքերին, սպասվում է նոր ճանաչումներ մի շարք երկրների խորհրդարաններում, իսկ այդ նախաձեռնությունների հետեւում



շրջանակների մեջ: Այն պահին, երբ հայ-թուրքական արձանագրությունների շուրջը թուրքական կողմը կոշտացնում է դիրքորոշումը, երբ տարբեր երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչման նոր ալիք է բարձրանում, Թուրքիո պատասխանատուների այսպիսի նախաձեռնությունների հետին միտքը պարզելու մղումը առաջին գործ է դառնում, մանավանդ` թուրքական դիվանագիտությունն արեւելյան խորամանկության մարմնացումն է համարվել միշտ:

Առաջին միտքը, որ ծագում է, այն է, թե Թուրքիան միջազգային հանրության ճնշումներին դիմակայելու եւ Ցեղասպանության ճանաչման նոր ալիքի ահագնությունը մեղմելու համար կանգնած է Սփյուռքը, ուրե՞մն: Համենայն դեպս, թ՛ւ Դավութօղլուն է նման բան ասել, թ՛ւ օրեր առաջ Երեւանում ՆԱՏՕ-ի Ռոուզ Ռութ սեմինարին մասնակցած իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության փոխնախագահ Սունաթ Քընքլըօղլուն երկրորդել է այդ միտքը, մինչդեռ վերջինս Երեւանում գտնվելու օրերին որեւէ փափուկ միտք չարտահայտեց. մեկ խոսում էր Ղարաբաղի հարցում առաջընթացի դեպքում միայն արձանագրությունների վավերացումից, մեկ` անառարկելի տոնով խոսում էր պատմական հանձնաժողովից, որը, նրա կարծիքով, հենց Ցեղասպանության լինել-չլինելը պետք է քննարկի:

Տես էջ 8

# Թուրքիայում գործի դրվեց «պատժիչ մեքենան»

Մեր թերթը երեկվա համարում տեղեկացրել էր, որ թուրք փաստաբան **Բենդալ Ջելիլ Էգմանը** դիմել էր Անկարայի հաշտարար դատարան` պահանջելով, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: «Ճանաչեք հայերի ցեղասպանությունը: Մեղավոր ճանաչեք Թալեաթ փաշային եւ նրա համախոհներին: Թալեաթի անունը կրող փողոցներից եւ դպրոցներից հանեք այդ անունը», ասված էր նրա հայտարարության մեջ:

Zaman-ի փոխանցմամբ` Ստամբուլի փաստաբանական գրասենյակի ղեկավար **Սերհաթ Քամիլ Զորը** երեկ հանրապետական դատախազություն է ներկայացրել հայցադիմում, համաձայն որի Հայոց ցեղասպանությունը ճանաչող փաստաբանին մեղադրում է թուրք ազգին վիրավորելու, պետական կառույցների դեմ սուտ խոսելու, փաստաբանի մասնագիտությանը հակառակ գործելու մեջ:

Հայցադիմումում փաստաբանը նշել է, որ ինքը ծնվել է Էրզրումի Իսպիր գավառի գյուղերից մեկում, որի շրջակայքի շատ բնակավայրեր կրում են հայկական եւ հունական անուններ, սակայն դարասկզբին` ռուսների նվաճումների ժամանակաշրջանում հայերն են կոտորել թուրքերին:

Եթե դատախազությունը ընթացք տա Քամիլ Զորի բողոքին, ապա Ջելիլ Էգմանի նկատմամբ հետապնդություն կսկսվի Թուրքիայի ՔՕ 301-րդ հոդվածով:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած թուրք փաստաբանը պահանջել էր, որ հետապնդություն սկսվի Թուրքիայի քրեական օրենսգրքի «Հանցանքը եւ հանցագործին գովերգելու եւ մարդկության դեմ ուղղված հանցագործություն կատարելու» հոդվածի հատկանիշներով:

Հ. Հ.

# Այցելություն Ռուսաստանի դեսպանություն

Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցության մի խումբ անդամներ երեկ այցելեցին Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանություն եւ իրենց ցավակցությունը հայտնեցին Մոսկվա եւ Կիզլյար քաղաքներում տեղի ունեցած ահաբեկչության հետեւանքով զոհվածների հարազատներին եւ ռուս ժողովրդին: Դեսպանությունում բացված սգո մատյանում Արմենական-ՌԱԿ անդամներ Արմեն Մանվելյանը, Սուրեն Սարգսյանը եւ Արթուր Ոսկանյանը ցավակցության իրենց գրառությունները թողեցին` թե՛ կուսակցության եւ թե՛ անձամբ իրենց անունից: Ցավակցություններում մասնավորապես նշվում էր, որ ահաբեկչությունը, որի հետեւանքով անմեղ մարդիկ են զոհվում, նողկալի արարք է եւ չի կարող արդարացում ունենալ:

# Գարնանային զորակոչ



Հայաստանի պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** երեկ տեղեկացրեց, որ գարնանային զորակոչը երկրում կանցկացվի ապրիլ-հունիս ամիսներին: Կառավարությունն արդեն հավանության է արժանացրել զորակոչ կազմակերպելու նախագիծը: Զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու համար կստեղծվի հանրապետական զորակոչային հանձնաժողով, կհաստատվի կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմը: Իսկ զորակոչից խուսափող ՀՀ քաղաքացիների վերաբերյալ նյութերը կուղարկվեն ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, պաշտպանության նախարարությունն այս հարցում կհամագործակցի նաեւ ՀՀ դատախազության հետ: Կիրականացվեն լրացուցիչ միջոցառումներ հանրապետությունից դուրս գտնվող զորակոչից խուսափող անձանց հետախուզման եւ հանրապետություն վերադարձնելու նպատակով: Քայլեր կձեռնարկվեն նաեւ զորակոչի բժշկական սպասարկումը պատշաճ կազմակերպելու ուղղությամբ: Կառավարությունը երեկ հաստատեց նաեւ Մայր աթոռի միաբաններին, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբաններին եւ ուսանողներին, Հնդկաստանի Կալկաթայի մարդասիրական ճեմարանի սաներին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու որոշման նախագիծը:

Հ. Ա.

# Գյուղատնտեսական համալսարանի այգին` շինհրապարակ

## *«Քո օրերը չէ` քո ժամե՛րն են հաշված»... ահաբեկում են «Ազգի» լրագրողին*

Մի քանի օր շարունակ «**Ազգը**» ահազանգ էր ստանում ուսանողներից Աբովյան ու Տերյան փողոցների միջեւ գտնվող նախկին Ղուկասյանի անվան այգում կատարվող տարօրինակ շինարարական աշխատանքների մասին: Տարածքում գտնվող 4 բուհերի` հատկապես Գյուղատնտեսական համալսարանի ուսանողների համար փաստորեն որպես campus ծառայող, հազվագյուտ ծառատեսակներով գեղեցիկ այգին ոչնչացվում է ի սպառ:

«**Ազգի**» թղթակիցը, բնականաբար, եղավ տեղում` ստուգելու ահազանգերի իսկությունը: Պարզվեց սարսափելի մի տեսարան. տարիներ առաջ Գյուղինստիտուտի ջանքերով բացառիկ ծառատեսակներով ու թփերով օժտված, զանազան արձաններով ու մանավանդ աստղադիտարանով հարուստ եւ եզակի այգին պարսպապատվել էր երկու` Աբովյան ու Տերյան փողոցների կողմից: Ընդամենը 1 ամիս առաջ այստեղ կանգնեցվել էր աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի արձանը, որն այժմ մարդկանց հայացքից մեկուսացվել է Աբովյան փողոցի կողմից քաշված ամրափակ պարսպով, իսկ Տերյան փողոցի կողմում գտնվող «Յոլկի-Պալկի» կոչվող փայտաշեն սրճարանը ընդհանրապես չի երեւում` սահմանները կրկնապատկած կանաչ գույնի պարսպի հետեւում:

Տես էջ 2



AZG NEW PDF.qxd 01/04/2010 22:54 Page 1



# «Եթե Թուրքիան ճանաչի Ցեղասպանությունը, սկզբից ի՞նչ եք պահանջելու»

## Հարցնում է CNNturk-ի գլխավոր խմբագիրը

Ամբողջ աշխարհում Ցեղասպանության հարցի` գոնե քննարկումներին զուգահեռ բուն Թուրքիայում նույնպես բավական «համարձակներ» են ի հայտ գալիս, որոնք նույնիսկ դատական հայցով են դիմում դատարան` պահանջով ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որոնք պահանջում են թուրքական պետությունից` հաշտվել սեփական պատմության, դրա ամոթալի էջերի հետ, իսկ վարչապետ Էրդողանը, հավատարիմ մնալով իր կեցվածքին, շարունակում է հայտարարել` «թուրքական պատմությունը ամոթալի էջեր չունի»: Այս ամպագոռգոռ հայտարարությունն իրենց չեն կարող թույլ տալ նույնիսկ Խաղաղ օվկիանոսի կղզիներում ապրող ժողովուրդները. ամբողջ աշխարհի պատմությունն է լի ամոթալի էջերով, եւ միայն այն խոստովանողներն են, որոնք կարող են գոնե հույս ներշնչել, որ ժողովուրդներն այլեւս ամոթալի էջեր չեն արձանագրի: Ինչեւէ, վերջին ժամանակներում որոշ` նույնիսկ բարձրաստիճան թուրք պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ հրապարակավ չեն հերքում Ցեղասպանության եղելությունը, նրանցից ոմանք առաջարկում են հարցը քննարկել ստեղծվելիք պատմաբանների միջկառավարական հանձնաժողովում, իսկ մյուս մասը առհասարակ հարց է ուղղում հայերիս` իսկ եթե ճանաչենք, ի՞նչ կլինի հետո, ի՞նչ կպահանջեք մեզանից` հո՞ղ, թե՞ պարզապես փոխհատուցում: Հենց այս հարցն է ուղղել CNNturk-ի գլխավոր խմբագիր **Մեհմեդ Ալի Բիրանդը** Երեւանում հայ ուսանողներին: Իսկ վերջիններս, Բիրանդի խոսքերով, «պարզապես զարմացած նայել են եւ չեն իմացել ինչ պատասխանեն». «Հայ գիտնականները, սակայն, հարցի վերաբերյալ լրիվ այլ պատկերացումներ ունեն», նշել է Բիրանդը: Թուրք լրագրողի այս հարցը միայն ապացուցում է, որ Թուրքիան գիտի «1915-ի իրադարձությունների» իրական անվանումը, որ Անկարայի համար կարեւոր է ճշտել, հասկանալ, թե ի՞նչ են պահանջելու հայերը, իսկ այս վերջին հարցում մենք, իրոք, խնդիր, ավելի ճիշտ` տարաձայնություններ ունենք` որեւէ ընդհանրական մոտեցում պարզապես գոյություն չունի:

Պատմելով Հայաստանից, Երեւանից ունեցած իր տպավորությունների մասին, Բիրանդը նաեւ նշել է, որ. «Հայաստանն այլեւս այն 90-ականների աղքատ եւ խղճուկ երկիրը չէ: Այժմ վիճակն այլ է, ես զարմանքով տեսա Երեւանի զարգացումը: Պողոտաները վերանորոգված են, մաքուր: Արտասահմանյան հայտնի ապրանքանիշներով խանութների առկայությունը խոսում է այն մասին, որ բնակչությունը գնողունակ է: 1,5 մլն բնակչություն ունեցող Երեւանի գիշերային կյանքը գունզգույն է: Հայաստանի ընդհանուր վիճակը ճիշտ կլինի նկարագրել որպես միջին ապրելակերպ: Հայերը պատրաստ չեն սահմանի բացման համար զոհաբերել ամեն ինչ, ինչպես մենք ենք կարծում այստեղ: Ինչպես ապրել են անցնող 17 տարում, այնպես էլ կարող են ապրել», նկատել է Բիրանդը: Այնուհետեւ Բիրանդը խոսել է, թե ի՞նչ կբերի սահմանի հնարավոր բացումը երկու երկրներին: Թուրք լրագրողը վստահեցրել է, որ այն ոչ միայն կնպաստի Հայաստանի տնտեսության աճին, Հայաստանի համար կբացվեն Միջին Արեւելքի եւ Եվրոպայի շուկաները. «Սակայն սահմանի բացումը մեծ օգուտներ կբերի նաեւ Թուրքիային: Մեր երկիր եկող տուրիստների թիվը զգալիորեն կավելանա: Թուրքիան կարող է աշխուժացնել Սեւ եւ Միջերկրական ծովերի նավահանգիստները: Վան-Կարս տարածաշրջանում առեւտուրը, տուրիզմը կաշխուժանան: Թուրքական ապրանքն ավելի էժան կնստի Հայաստան, եւ, որն ավելի կարեւոր է, թուրքական ապրանքն ավելի էժան կհասնի Միջին Ասիա», նշել է Բիրանդը:

Փաստորեն պարզվում է, որ Թուրքիայում շատերը գիտեն, թե ի՞նչ է եղել 1915-ին, թե ի՞նչ կբերի հենց միայն իրենց երկրին հայ-թուրքական բաց սահմանը, սակայն քչերն են համաձայն հանուն Հայաստանի հետ բաց սահմանի երես թեքել Բաքվից. նրանք էլ, ինչպես անցած 17 տարում ապրել են փակ սահմանով, կարող են դեռ ապրել. մանավանդ որ Թուրքիայում էլ «պողոտաները վերանորոգված են եւ մաքուր»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Գյուղատնտեսական համալսարանի այգին` շինհրապարակ



*1-ին էջից*

Եվ ահա, հազիվ մեկ ամիս անց, արձանի առջեւի ողջ հատվածը մինչեւ Աբովյան փողոցի մայթ տարածվող պարտեզի հետեւում բացվել է շուրջ 700 քմ տարածքով շինհրապարակ, որի տակ փորված 8-10 մետր փոսը մեծամասամբ արդեն իսկ ծածկվել է, եւ ամբարձիչներն աշխատում են օրնիբուն` երկաթյա կարկասները տեղադրելու: Սույն հատվածի պարտեզի վրա գունավոր պատկերված է ապագա «գողտրիկ» ու «փոքրիկ» սրճարանի մակետը, որի կողքին մեր թղթակիցն արձանագրել է հետեւյալ գրությունը` Երեւանի քաղաքապետարանի ճարտարապետահատակագծային առաջադրանք N 01/50-22466-538, հաստատված 23.12.2009 թվին, իսկ շինարարության թույլտվությունը տրված է 19.02.2010 թվին, N 01/50-1174-71 համարի տակ, տրված «Էլեգանս-5» ՍՊԸ-ին` սրճարանի վերակառուցում կատարելու համար: Ուշադրություն` վերակառուցում: Ճիշտ է, այնտեղ 90-ական թթ. կեսերից ի վեր գործում էր բացօթյա սրճարանատիպ մի բան, անհիմաս ինչ-որ սյուներով: Բայց կատարվող աշխատանքը բուռն ցանկության դեպքում անգամ անկարելի է կոչել վերակառուցում: Դա ֆունդամենտալ կառույց պետք է լինի, եթե ոչ հիմա, ապա մի քանի տարի անց:

Առավել սոսկալի պատկեր է պարզվել այգու հակառակ մասում: Այստեղ էլ, ավելի քան 1200 քմ մետր տարածքի վրա տարածվող պարտեզի վրա պատկերված է առավել փոքրիկ, ընդամենը 1 հարկանի ապակեպատ մի սրճարան, որի «վերակառուցումն» իրականացնում է այս անգամ «Ֆիլիշին» ՍՊԸ-ն` N 01/50-2-2144 առաջադրանքով (տրված 15.01.2010 թ.) եւ N 01/50-1957-65 թույլտվությամբ (16.02.2010 թ.): Մինչդեռ «**Ազգի**» աշխատակիցը, սպրդելով պարտեզի կիսաբաց դռնից ներս, նկատել է մոտ 12 մետր խորությամբ փորված փոս` հիմքերը գցելու համար, կտրված եւ անդամահատված ծառերի մի հսկայական կույտ, իսկ ձախ կողմում աշխատող ամբարձիչի պարանից կախված` «Անհայտ տղայի» արձանը (տես` նկարը): Սարսափած տեսարանից` մեր աշխատակիցը փորձել է շինարարությունում ինչ-որ պատասխանատուի գտնել` հարցուփորձ անելու նպատակով: Ինչ-որ անկյունից դուրս է պրծել ռուսախոս մի մարդ (տեսնել նկարը), որ տեսնելով թղթակցի ձեռքին լուսանկարչական գործիք` հարձակվել է վերջինիս վրա եւ հենց պարտեզի դռան մոտ երկու անգամ հարվածել ուսին ու գլխին, փորձել ձեռքից խլել գործիքն ու պայուսակը: Բարեբախտաբար, մոտիկ մայթի վրա կանգնած ուսանողները հասել են մեր թղթակցին օգնության եւ նրան ազատել գազազած «շինարարի» ճիրաններից: Վերջինս կատաղության մեջ չի մոռացել սպառնալ`



«Քո օրերը չէ` ժամե՛րն անգամ հաշված են»...

Ի պատասխան այս եւ հետագայում ինչելիք սպառնալիքներին ասենք, որ «**Ազգը**» հետամուտ է լինելու այս գործի բացահայտմանը` Երեւանի քաղաքապետարանը ի՞նչ հիմքով է տվել վերոհիշյալ թույլտվությունները, ո՞վ եւ ինչպե՞ս է իրականացնում շինարարական վերահսկողությունը, կառուցապատողներն ունե՞ն անհրաժեշտ այլ թույլտվություններ շրջակա միջավայրն ու գեղեցիկ այգին այլանդակելու, արձանների հետ ըստ կամս, ավելի ճիշտ` վանդալի նման վարվելու, եւ վերջապես` Օղակաձեւ զբոսայգին բզիկ-բզիկ անելուց հետո Երեւանի կենտրոնում մնացած վերջին այգիներից մեկն էլ հոշոտելու: Եվ վերջապես` ցանկանում ենք իմանալ, որ ՀՀ դատախազությունը ի՞նչ քայլեր է ձեռնարկելու լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու այս դեպքի առթիվ:

Սպասում ենք համապատասխան մարմինների շուտափույթ արձագանքին:

«ԱԶԳ»

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Մայիսի 23-ը` Լրագրողի օր ԼՂՀ-ում

**ԼՂՀ կառավարությունն իր վերջին նիստում որոշում է ընդունել ամեն տարի մայիսի 23-ը Լրագրողի օր նշելու մասին:**

**Գործադիրին նման առաջարկ ներկայացրել էր Արցախի ժուռնալիստների միությունը: Անցյալ տարվա մայիսի 23-ին Ղարաբաղում առաջին պարբերականի լույս ընծայման 135-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ հանրապետությունում գործող լրատվամիջոցների պատասխանատուներն ու լրագրողները հավանություն էին տվել հիշյալ առաջարկին: Այնուհետեւ, սեպտեմբեր ամսում, ժուռնալիստների միության երրորդ համագումարն ընդունել էր Լրագրողի օր նշելու որոշում եւ պարտավորեցրել նորընտիր վարչությանը` հետամուտ լինել պետական տոնացույցում այն ընդգրկելու խնդրին, ինչն էլ իրականացվել է:**

**Արցախում առաջին պարբերականը` «Հայկական աշխարհը», Խորեն Ստեփանեի (իսկական անունազգանունը` Ստեփան Ստեփանյան) խմբագրմամբ լույս է տեսել 1874 թվականին Շուշիում: Դրանից հետո բազմաթիվ այլ թերթեր են հրատարակվել եւ շարունակվում են լույս ընծայվել Ղարաբաղում` վկայելով երկրամասի հարուստ մշակութային ժառանգության եւս մի բաղկացուցիչի առկայության մասին:**

**Տեղեկացնենք, որ ժուռնալիստների միությունը միաժամանակ տպագրության է ներկայացրել գիտական ձեռնարկ «Արցախի մամուլի պատմությունից. 1874 թվականից մինչեւ մեր օրերը» վերնագրով: Այն նախատեսվում է ընթերցողի դատին ներկայացնել ապրիլի վերջին: Հեղինակը լրագրող, պատմական գիտությունների թեկնածու Մհեր Հարությունյանն է, որը երկար տարիներ զբաղվում է մամուլի պատմության ուսումնասիրությամբ:**

**Զուգադիպությամբ, այս տարի մայիսի 23-ին ԼՂՀ-ում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ: Քանի որ ընտրությունների օրը բոլոր կարգի զանգվածային միջոցառումներն օրենքով արգելվում են, ուստի հավանական է, որ արցախցի լրագրողներն իրենց մասնագիտական տոնը կնշեն ընտրություններին հաջորդող որեւէ այլ օր:**

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

# Հանրակրթության օրենքը համապատասխանում է հանրակրթական բարեփոխումներին



Այս մասին հայտարարեց երեկ ասուլիս հրավիրած Հայաստանի կրթության եւ գիտության փոխնախարար **Մանուկ Մկրտչյանը**: Ըստ վերոհիշյալ օրենքի` բոլոր ավագ դպրոցները, որոնք այս պահին երկրում 48-ն են, պետք է անցնեն անմիջապես նախարարության ենթակայության տակ: Իսկ առաջիկայում, Մկրտչյանի խոսքերով, ավագ դպրոցների թիվը հանրապետությունում կհասնի 120-ի:

Ինչ վերաբերում է դպրոցների տնօրենների ընտրության կարգին, ապա ԿԳ փոխնախարարը տեղեկացրեց, որ նախկինում նախարարությունը որեւէ մասնակցություն չուներ դպրոցների տնօրենների ընտրության գործում. «Սակայն նոր օրենքի համաձայն, բոլոր դպրոցների խորհուրդներում կրթության եւ գիտության նախարարությունը կունենա իր ներկայացուցիչը, բացի այդ, յուրաքանչյուր ուսուցիչ չի կարող մասնակցել դպրոցի տնօրենի ընտրությանը», նշեց Մկրտչյանը: Իսկ ընտրությանը մասնակցելու համար մանկավարժը պետք է ունենա հավաստագիր, որը տրվում է 5 տարի ժամկետով: Վերոհիշյալ հավաստագիրը ստանալու համար մանկավարժը պետք է «բավական խիստ կազմակերպված քննություններ անցնի»:

Մկրտչյանը նշեց նաեւ, որ շուտով կսկսվի ուսուցիչների ատեստավորման գործընթացը. «Այս պահին ատեստավորման կարգն արդեն ներկայացված է կառավարության հաստատմանը», եզրափակեց Մկրտչյանը:

Հ. Ա.

# Ինքնասպասարկման օնլայն հնարավորություն` «Վիվասել-ՄՏՍ»-ից

**Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերության կայքէջի «Առցանց ծառայություններ» բաժնում սկսել է գործել «Ինտերնետ օգնական» ինքնասպասարկման պորտալը: Այն հաճախորդներին թույլ է տալիս օնլայն ռեժիմով վերալիցքավորել հաշիվը, ստուգել հաշվեկշիռը, կատարել վճարումներ, տեսնել մանրամասն հաշիվը, կառավարել սակագնային պլանները եւ տրամադրվող ծառայությունները: Այս պորտալի վրա առաջարկվող ծառայությունների ցանկն ընդլայնվելու է:**

**«Ինտերնետ օգնական» ինքնասպասարկման պորտալի մշակման մեր նպատակը բաժանորդների սպասարկման օնլայն կենտրոնի ստեղծումն է, որը շուրջօրյա թույլ կտա ձայնային եւ տվյալների փոխանակման ծառայություններից օգտվող մեր բաժանորդներին հեշտությամբ կառավարել դրանք: «Ինտերնետ օգնական» պորտալը կարող է օգտակար լինել ե՛ւ հետվճարային, ե՛ւ կանխավճարային բաժանորդներին: Ինքնասպասարկման այս հնարավորությունը մեր բաժանորդներին թույլ է տալիս խնայել իրենց ժամանակը և վերահսկել ծառայությունների օգտագործումը», այս առթիվ նշել է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 01/04/2010 22:46 Page 1



# Հակաճգնաժամային միջոցառումները դրական են ազդել տնտեսության վրա

## Հավաստիացրեց վարչապետ Տիգրան Սարգսյանը

Մինչ կառավարության նիստի սկսվելը Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը** դիմեց ներկաներին, հիմնականում անդրադառնալով երկրի սոցիալ-տնտեսական դրական ցուցանիշներին:

Վարչապետը նախ խոսեց Վերահսկիչ պալատի վերջին ուսումնասիրությունների մասին, նախարարներին զգուշացնելով եւ հանձնարարելով վերացնել հայտնաբերված խախտումները: Այլապես կիրառվելու են «խիստ պատիժներ»: Նա հայտնեց, որ Վերահսկիչ պալատի բացահայտած խախտումներից միայն 2009-ի համար շուրջ մեկուկես միլիարդ դրամ գումար է փաստացի վերականգնվել, բայց այդ ցուցանիշը բավարար չէ «այն պարզ պատճառով, որ բացահայտված խախտումների ցուցանիշը ավելի բարձր էր»: Ուստի նախարարություններըը պետք է վարչապետին տեղեկանք ներկայացնեն, թե ինչպես են վերացվում բացահայտված թերությունները, որպեսզի մնացած բոլոր գումարները նույնպես վերականգնվեն մեկ շաբաթվա ընթացքում:

Այնուհետեւ Տիգրան Սարգսյանը ներկայացրեց այս տարվա առաջին եռամսյակի ամփոփված արդյունքները, փաստելով, որ 2009-ին կառավարության «իրականացրած հակաճգնաժամային միջոցառումներն արդեն իսկ ցույց են տալիս իրենց դրական ազդեցությունը տնտեսության վրա»: Մասնավորապես նշվեց, որ այս տարվա առաջին երկու ամիսների համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) պաշտոնական ցուցանիշը 2,5 անգամ գերազանցում է ծրագրայինը:

«Միեւնույն ժամանակ, պետական բյուջեի հարկային կատարողականը վկայում է, որ եռամսյակում նույնպես ունենալու ենք տնտեսական աճի բարձր ցուցանիշ, որովհետեւ գերակատարել ենք ե՛ւ հարկային, ե՛ւ սոցիալական վճարների եռամսյակի ցուցանիշները: Հարկային մուտքերի մեր ծրագրային ցուցանիշը կազմում էր 117 մլրդ, փաստացին 126 մլրդ 733 մլն է, այսինքն շուրջ 9,5 մլրդ դրամով գերակատարվել է հարկային ծրագիրը: Սոցիալական նպաստների գծով ծրագրել էինք հավաքել 22 մլրդ, փաստացին կազմում է 26 մլրդ կամ շուրջ 4 մլրդ դրամով գերակատարում ունենք: Չափազանց կարեւոր է, որ առաջին եռամսյակում արձանագրվել է աշխատավարձի շուրջ 5.8 տոկոս աճ, ինչը նույնպես վկայում է դրական դինամիկան, որովհետեւ աշխատավարձը բարձրացել է ե՛ւ պետական, ե՛ւ մասնավոր հատվածում: 16 տոկոս ներմուծման դիմաց շուրջ 53 տոկոս աճել է արտահանումը: Այն պայմանավորված է արդյունաբերության աճի տեմպերով. լեռնահումքային արդյունաբերությունն աճել է 45, մշակող արդյունաբերությունը` 9 տոկոսով, շինանյութի արտադրությունը կրկնապատկվել է: Ադամանդագործությունը եւ ոսկերչությունն աճի բարձր տեմպեր են դրսեւորել, ադամանդագործությունը` 39, ոսկերչությունը` 25, դեղագործությունը` 16 տոկոս: Թվարկված բոլոր ճյուղերը հիմնականում արտահանման ցուցանիշը բարելավող ճյուղերն են», տեղեկացրեց վարչապետը:

Ամենամտահոգիչ խնդիրը Տիգրան Սարգսյանը համարեց գնաճի բարձր մակարդակը` 8,8 տոկոս: «Այսօրվա գնահատականով եւ Կենտրոնական բանկի կանխատեսումով` մինչեւ տարեվերջ մեզ կհաջողվի փոքր-ինչ զսպել գնաճը եւ բնականաբար այս ցուցանիշները կնվազեն», հավաստիացրեց վարչապետը, մանրամասնելով այդ խնդրի վերաբերյալ նախատեսվող աշխատանքների ուղղությունները:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**




# Որսագողության դեպքերը նվազել են, բայց չեն վերացել

**Շիկահողի արգելանոցին վտանգ չի սպառնում: «Հենարան» ակումբում տեղի ունեցած ասուլիսի ընթացքում բնապահպանության նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների բաժնի պետ Արամ Աղասյանը վստահեցրեց, որ Իրանից դեպի Հայաստան նախագծված միջպետական ճանապարհը եւ նավթատարը Շիկահողի արգելոցով չեն անցնելու: «Նախագիծը ներկայացվել է բնապահպանության նախարարություն եւ անցնելու է Քաջարանը հատող հատվածով», ասաց Արամ Աղասյանը:**

**Ներկայումս Հայաստանում կան 3 պետական արգելանոց, 4 ազգային պարկ, 27 արգելավայր եւ 230 բնության հուշարձան: Նախորդ տարի այս ցանկին ավելացվել է եւս 3 հատուկ պահպանության տարածք` 75 հազար հեկտար ընդհանուր մակերեսով: Բնապահպանության նախարարության ներկայացուցիչը նկատում է, որ համակարգը ձեւավորվել է դեռեւս 1958 թվականին եւ այսօր հատուկ պահպանման վայրերը քարտեզագրման եւ կենսաբազմազանության հետ տեղի ունեցած փոփոխությունների ճշտման կարիք ունեն: «Պահպանվող տարածքների ստեղծումը չի կարող ինքնանպատակ լինել: Պետք է համոզված լինենք, որ այդ տարածքում պահպանության արժանի կենսաբազմազանություն կա», նկատեց բանախոսը: Արգելավայրերի պահպանության ռեժիմի խստացումը, նրա կարծիքով, օգտակար չի լինի, քանի դեռ ճշտված չեն հատուկ պահպանվող տարածքներում կենսաբազմազանության հետ տեղի ունեցած փոփոխությունները: Որսագողությունը եւ անտառահատումները կանխելու նպատակով նախարարությունը փորձել է ավելացնել անտառապահների աշխատավարձերը եւ պետական հատկացումներն այդ վայրերի պահպանության համար: «Անտառապահներն այսօր 15 հազարի փոխարեն ստանում են 50-60 հազար դրամ աշխատավարձ», շեշտեց Արամ Աղասյանը:**

**Թեպետ բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի մոնիտորինգային խմբի անդամները հատուկ պահպանության վայրերում որսագողության դեպքեր չեն արձանագրել, սակայն երեւույթի առկայությունը մասնաճյուղի տնօրենը չի բացառում: «Կան փող ունեցող մարդիկ, որոնք գնում են որսի», ասաց մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը: Նրա տվյալների համաձայն` այսօր Հայաստանում գրանցված է 25000 որսորդ: «Չգրանցված որսորդների թիվը գրանցվածներին հավասար կլինի: Հարկավոր է որսի քաղաքակիրթ կանոններ մշակել», ասաց նա:**

**Կարեն Մանվելյանը տեղեկացրեց, որ կառավարությունն արդեն ընդունել է հանրապետության կարմիր գրքում ընդգրկված բույսերի եւ կենդանիների ցանկը: «Ըստ այդմ խախտումների դեպքում կսահմանվեն նոր տուգանքներ», ասաց Արամ Աղասյանը: Բնապահպանության նախարարության ներկայացուցիչը հիշեցրեց, որ մինչ նոր տուգանքի չափերի հաստատումը, օրինակ բեզոարյան այծի ոչնչացման համար, գործող օրենքի համաձայն, կտուգանվեն 3 մլն դրամի չափով, իսկ պահպանվող տարածքներում խախտումը կատարելու դեպքում 5 անգամ ավելի մեծ գումարով:**

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**

# ՀՅԴ-ն գոհ է Ռոբերտ Քոչարյանից, դժգոհ` Լեւոն Տեր-Պետրոսյանից

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի` Հայաստանի տնտեսության վերաբերյալ գնահատականներից հետո երկրի ներքաղաքական կյանքում նոր իրավիճակ ստեղծվեց: Քոչարյանի վերադառնալ-չվերադառնալու լուրերին զուգահեռ տարբեր քաղաքական ուժեր իրենց տեսակետները արտահայտեցին երկրորդ նախագահի վերաբերյալ: Եթե «Ժառանգություն» կուսակցությունը Քոչարյանին համարում է վատ երազ, ապա Դաշնակցությունը կարծես հանդես է գալիս երկրորդ նախագահին պաշտպանողների թիմում:

«Այո, մադրիդյան սկզբունքները մշակվել են Ռոբերտ Քոչարյանի նախագահության եւ Վարդան Օսկանյանի նախարարության տարիներին, բայց ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանի եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնավարման տարիներին դրանք լրացվել են, ընդ որում, ինչպես տրամաբանությունն է հուշում, լրացվել են ոչ մեր օգտին, եթե Ադրբեջանը, որ չէր համաձայնում մադրիդյան սկզբունքներին, համաձայնել է դրանց լրացված տարբերակին», մի քանի օր առաջ ասել էր ՀՅԴ ԳՄ անդամ **Արմեն Ռուստամյանը**` վերլուծելով ՀՀ երկրորդ եւ երրորդ նախագահների արտաքին քաղաքականության ուղեգիծը:

Դաշնակցական գործիչը նաեւ հիշատակել էր, որ Քոչարյանը մերժել էր պատմաբանների հանձնաժողով ստեղծելու Էրդողանի առաջարկությունը, մինչդեռ Սերժ Սարգսյանն այդ առաջարկությունն ընդունել է, հայ-թուրքական արձանագրություններում տեղ տալով պատմաբանների ենթահանձնաժողովի մասին դրույթին: Ավելի ուշ նա առաջարկել էր լրջորեն քննարկել Ռոբերտ Քոչարյանի` Հայաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ դատողությունները, որովհետեւ դրանք արդիական են ու խիստ կարեւոր:

Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ երեկ իր տեսակետն է արտահայտել նաեւ ՀՅԴ մեկ այլ գործիչ, ԱԺ պատգամավոր **Ալվարդ Պետրոսյանը**. «Քոչարյանը քաղաքական եւ պետական գործիչ է, որ նույնքան իրավունք ունի կարծիք հայտնելու, որքան «ՀՀՇ մի կարկառուն ներկայացուցիչ»: Այդ ինչո՞ւ Լեւոն Տեր-Պետրոսյանն իրավունք ունի վերադառնալու քաղաքականություն, իսկ Ռոբերտ Քոչարյանն իրավունք չունի կարծիք հայտնելու: Նորմա՞լ եք համարում: Իսկ որ բոլորովին չհայտնեն, պետք է ասեիք` Սերժ Սարգսյանը կալանքի է ենթարկել Ռոբերտ Քոչարյանին: Մարդ, որը 10 տարի երկրի ղեկավարն էր, դրանից առաջ էլ Ղարաբաղում էր որպես առաջին դեմք իր գործունեությունը ծավալել, իրավունք ունի նաեւ կարծիքներ հայտնելու: Նավթալինոտ քաղաքական գործիչներ կան, որ իրենք էլ զարմացած են, որ դեռ քաղաքականության մեջ են, իսկ Ռոբերտ Քոչարյանը` հանրապետության 2-րդ նախագահը, որն արցախյան, հայ-թուրքական խնդիրերի ակունքներում է կանգած, իրավունք չունի՞ իր կարծիքը հայտնելու երկրի տնտեսության կամ քաղաքական հետագա զարգացումների մասին»:

Եզրափակելով իր խոսքը Պետրոսյանը հավելել է, որ Քոչարյանը երիտասարդ է եւ կարող է 2 տարի հետո նորից մեծ քաղաքականություն վերադառնալու հայտ ներկայացնել:

**Հ. Հ.**

# Կլինի՞ արդյոք Հայաստան-Թուրքիա հանդիպում Վաշինգտոնում

*1-ին էջից*

Սակայն, ինչպես եւ շատ այլ հարցերում, այս պարագայում էլ Թուրքիան, բազմիցս խաղացած «պոչը» կրկին խաղացնելու ցանկություն ունի, չնայած իրազեկ աղբյուրների վկայությամբ հարցն արդեն դրական լուծում է ստացել: Հետաքրքրական է, որ թուրքական լրատվամիջոցները, այդ թվում` «Հյուրիեթ»-ը, Էրդողանի մասնակցությունը միջուկային անվտանգության գագաթաժողովին համարում են գրեթե լուծված:

«Հյուրիեթը», ըստ այդմ, գրում է, թե դիվանագիտական աղբյուրների համաձայն, Թուրքիայի վարչապետի ԱՄՆ մեկնելու մասին է վկայում, որ թուրքական իշխանություններն արդեն իսկ որոշել են Վաշինգտոն Թուրքիայի ԱՄՆ-ում դեսպանի վերադարձի հարցը: Ավելին, դեսպանը, որ ԱՄՆ-ից հեռացել է «խորհրդակցությունների»` ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի մարտի 4-ին Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունումից հետո, ԱՄՆ է վերադառնալու մինչեւ ապրիլի 12-ը, այսինքն` մինչեւ միջուկային անվտանգության գագաթաժողովի մեկնարկը:

Թուրքական աղբյուրի տեղեկացմամբ, գագաթաժողովին մասնակցելու են մեկնելու ինչպես Թուրքիայի վարչապետ Էրդողանը, այնպես էլ արտգործնախարար Դավութօղլուն, չնայած դեռեւս պաշտոնապես չի հայտարարվել այցելության մասին: «Հյուրիեթը» տեղեկացնում է, թե, դիվանագիտական աղբյուրների համաձայն, Էրդողանի այցը եւ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նամիք Թանի վերադարձը հնարավոր են դարձել Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուի եւ ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնի միջեւ կիրակի օրը տեղի ունեցած երկարաձիգ հեռախոսային խոսակցության արդյունքում:

Այնպիսի տպավորություն է ստեղծվում այս տեղեկություններից, թե Թուրքիան իր վարչապետի ԱՄՆ մեկնելու հարցում հետսւառաջ անելով մի իրավիճակ է ստեղծել, որում ԱՄՆ-ը, ի դեմս պետքարտուղար Քլինթոնի, փորձել է համոզել Թուրքիային` մասնակցելու միջուկային անվտանգության գագաթաժողովին, ավելին, վերադարձնելու Թուրքիայի դեսպանին Վաշինգտոն: Հիշեցնենք, որ Թուրքիայի դեսպանի ԱՄՆ վերադառնալու առնչությամբ լավատեսական ու հույս հայտնող հայտարարություններ արել են մի քանի ամերիկյան պաշտոնյաներ, ըստ այդմ, իրապես հնարավոր է եւ այն իրավիճակը, որ ԱՄՆ պետքարտուղարը «համոզել է» Թուրքիայի վարչապետին հասնելու Միացյալ Նահանգներ` դեսպանի հետ:

Թուրքական թերթը, կրկին սեփական աղբյուրներին հղում անելով, նշում է, թե Էրդողանի` ԱՄՆ չմեկնելու դեպքում իրավիճակը կդիտվի որպես ԱՄՆ նախագահի դեմ բողոք, ինչը բնավ չի բխում թուրքական ազգային շահերից: Բացի այդ, Էրդողանի մերժումը Օբամայի հրավերին կարող է ունենալ հակառակ ազդեցությունը այնպիսի ուղերձից առաջ, ինչպիսին ամեն տարի Միացյալ Նահանգների նախագահները ուղղել են երկրի հայ բնակչությանը Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ:

Բնականաբար, Էրդողանի մասնակցության համար կարեւոր գործոններից թուրքական աղբյուրները նշում են նաեւ այն հանգամանքը, որ ապրիլի 12-13-ին Վաշինգտոնում տեղի ունենալիք միջուկային անվտանգության գագաթաժողովում քննարկվող հարցերում Թուրքիան փորձում է ակտիվ դերակատարում ունենալ` դեմ հանդես գալով միջուկային էներգիայի ռազմական կիրառմանը, բայց եւ կողմ լինելով միջուկային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործմանը:

Ինչ վերաբերում է թուրքական կողմից որեւէ տեղեկությանը, թե արդյոք Վաշինգտոնում տեղի կունենա՞ Հայաստանի եւ Թուրքիայի նախագահների հանդիպում, ապա այդպիսին թուրքական լրատվամիջոցները չեն նշում: Դրա փոխարեն փաստարկվում է, որ եթե Թուրքիայի վարչապետը որոշի չմեկնել Միացյալ Նահանգներ, ապա այդպիսի հանդիպում նախապես ծրագրված լինելու պարագայում Թուրքիան ավելի շուտ բացթողում կարձանագրի, քան որեւէ առավելություն:

AZG NEW PDF.qxd 01/04/2010 22:45 Page 1



# 1,5 միլիոն ծառ

## Ամեն հայ թող տնկի իր «մեկ ծառը»

### *Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությունը մեկնարկեց*

Այս տարվա հունվարի 27-ին Գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ Համաշխարհային հայկական կոնգրեսի անդամ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների համաժողով: Մասնակիցները հանդես եկան հայ երիտասարդությանը ուղղված կոչով` մասնակցելու Հայոց ցեղասպանության 1,5 մլն զոհերի հիշատակը հավերժացնող, նաեւ նոր կյանքի սկիզբ ազդարարող, Հայաստանի ողջ տարածքում 1,5 մլն ծառ տնկելու նախաձեռնությանը: «Մենք կոչ ենք անում երիտասարդներին Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախապատրաստմանը նվիրված միջոցառումներում զգացմունքային մոտեցումներից տեղափոխվել կառուցողական հարթություն եւ ամբողջ գործընթացը նվիրաբերել Հայաստանի հզորացմանը, հայ տնտեսականության վերելքին ու ամրապնդմանը ծառայելուն: Մենք հայոց վիշտը միշտ հիշենք ապրելու, կառուցելու եւ մեր երկիրը շենացնելու համար: Սա պետք է դառնա հայ երիտասարդության նշանաբանը` մեր անմեղ նահատակների հիշատակի հավերժացման գործում», հունվարի 27-ին հնչած այս կոչը մեծ արձագանք է ստանում երկրում: Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի այս` «նոր կյանքի» նախաձեռնությանը միացել են եւ դեռ կմիանան մի շարք կրթօջախներ, զորամասեր, հասարակական կազմակերպություններ, տարբեր քաղաքական կուսակցությունների երիտասարդական թեւեր, Հայաստանում, եւ նրա սահմաններից դուրս ապրող բազմաթիվ հայեր: Հուսանք` այս խորհրդանշական նախաձեռնությունից անմասն չեն մնա նաեւ երկրի իշխանությունը, մարզային եւ մայրաքաղաքային պաշտոնյաները, եւ կհաստկացվի տարածք` կյանքի կոչելու «Վերածննդի պուրակը», որն իր ամեն մի ծառով կխորհրդանշի Ցեղասպանության ամեն մի զոհին, մանավանդ որ պաշտոնապես կնքվել է համաձայնագիր ՀՀ Սփյուռքի նախարարության հետ` համատեղ իրականացնելու այս ծրագիրը:

Մարտի 31-ին մայրաքաղաք Երեւանում մեկնարկեց համազգային այս միջոցառումը, եւ դրանով իսկ հայ մանուկը, աշակերտը, երիտասարդը, զինվորը ձեռնամուխ եղան ամբողջ հայ ժողովրդի պատվին, արժանապատվությանը, հիշողությանը վերաբերող գործընթացի իրականացմանը:

### «Անմեղ նահատակի հիշատակին»

«Մինչեւ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը` 5 տարում, 1,5 մլն ծառ տնկելու մեր նախաձեռնությունը մի քանի նպատակ ունի. հավերժացնել Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, երկրում լուծել մի շարք բնապահպանական խնդիրներ եւ հայ երիտասարդի մեջ ցանկություն առաջացնել` ներգրավվելու երկրի հասարակական կյանքում: Այս ծառատունկը երկրի համար ռազմավարական խնդիրներ է լուծում», նշեց Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը**` մայրաքաղաքի թիվ 13 երաժշտական հատուկ դպրոցի տարածքում տնկելով իր «մեկ ծառը»: Բացի այս կրթօջախից, ծառատունկի մեկնարկը տրվեց նաեւ Շիրազի անվան թիվ 169, Նոր Նորքի թիվ 163 դպրոցներում, Ջարբախի թիվ 174 մանկապարտեզում, ինչպես նաեւ Նուբարաշենի մայրաքաղաքային գնդում: Ամենուր առկա էր մեծ խանդավառություն. ե՛ւ մանկապարտեզի մանկան, ե՛ւ դպրոցի աշակերտի, ե՛ւ հայրենիքի պաշտպան զինվորի աչքերում ամեն նորատունկ ծառի հետ երեւում էր հայի` հիշող եւ հավերժական լինելու տենչը:





### Աշակերտի «մեկ ծառը»

Մարտի 31-ին Երեւանի թիվ 13 երաժշտական հատուկ դպրոցում սկսվեց հենց դպրոցի սաներից կազմված նվագախմբի երաժշտությամբ: Երեխաները, մանկավարժները պատրաստ էին ծառատունկին, եւ շուտով գետնին դրված տնկիներից ոչինչ չմնաց. «Դու ուղիղ պահի ծառը, ես հողը լցնեմ, չէ, դո՛ւ պահի, ես լցնեմ հողը», ահա թե որն էր այդ օրը չարաճճի աշակերտների «վեճի» առարկան` բոլորն այդ օրը ծառ էին տնկում, ինչպես հենց իրենք նկատեցին` «Հայոց ցեղասպանության զոհերի համար»: Հատուկ դպրոցի տնօրեն **Սամվել Երանյանը «Ազգին»** վստահեցրեց, որ դպրոցի այգետանը, ինչպես նաեւ ողջ անձնակազմը, տնկելուց բացի, զբաղվելու են նաեւ ծառերի պահպանմամբ. «Այստեղ մեծ այգի է լինելու մի քանի տարուց», նշեց Երանյանը մեր զրույցում:

Աշակերտներից կազմված նվագախումբը շարունակում էր նվագել, «Չէ, ես հողը լցնեմ, չէ, ես լցնեմ» «վեճը»` նույնպես:

Շիրազի անվան թիվ 169 դպրոցում, տնօրեն **Սուսաննա Կիրակոսյանի** նախաձեռնությամբ, ամեն նորատունկ ծառին փակցվեցին ժապավեններ` տվյալ ծառը տնկողի անվամբ. «Յուրաքանչյուր ծառ տնկող հենց ինքն էլ պատասխանատու կլինի իր «մեկ ծառի» համար», նշեց Կիրակոսյանը: Իսկ «շիրազցի ծառ տնկողները» արդեն իսկ գիտակցում են պատասխանատվությունը ոչ միայն ծառերի, այլեւ նախաձեռնության նկատմամբ. «Այսօրվա մեր տնկած ծառերը խորհրդանիշ են այն կյանքերի, որոնք մնացին անավարտ: Այս ծառերը կապրեն նրանց փոխարեն ու կհիշեցնեն, որ հայն անմահ է», ահա 3-րդ դասարանցի **Նվարդ Առաքելյանի** խոսքերը` արտասանած իր իսկ տնկած «մեկ ծառի» կողքին: Իսկ նույն դասարանից **Աննա Հարությունյանը** իր «մեկ ծառի» կողքին հիշեցրեց, որ Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությամբ ծառեր ենք տնկում, որ հավերժանա հայի ոգին. «Մարդը գնում է, գործը` մնում», արդեն գիտի 3-րդ դասարանցի Աննան:



Ի դեպ, դպրոցի տնօրեն տիկին Կիրակոսյանը, հաշվի առնելով, որ ծառատունկը մեծ ոգեւորություն է առաջացրել աշակերտների մեջ, կրկնակի լավ գործ էր արել` ծառատունկին թույլ տալով մասնակցել միայն գերազանցիկներին. «Սա լուրջ ազդակ կլինի մյուսների համար, որպեսզի իրենք էլ ձգտեն գերազանց սովորելու, որ իրենք էլ մի օր իրենց «մեկ ծառը» տնկեն», ասաց Սուսաննա Կիրակոսյանը:




### Հայ զինվորի մեկ ծառը

«Բալես, հըլը բեր էդ ծառը, հիմա ուղիղ պահի, ես հողը լցնեմ», սա ամենեւին էլ հայրը չի դիմում որդուն սեփական հողամասում, այլ հայ բանակի սպան` հայ բանակի զինվորին: Նուբարաշենի մայրաքաղաքային գնդում` անձնակազմի հետ աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ **Մանուկյանն** իր զինվորների հետ ծառ էր տնկում: Իսկ վերջիններս, մոռանալով «դեդովշինայի» եւ «մալադոյության» առասպելները, ամեն մեկը իր բահով իր «մեկ ծառն» էր տնկում: Գյուղացի տղաները նույնիսկ խորհուրդ էին տալիս քաղաքացիներին` հողը ինչպես լցնել, որ «ծառը բռնի». «Այ, ցավդ տանեմ, սա սովորական ծառ չէ, սա Ցեղասպանության զոհերին նվիրված ծառ է», հայ զինվորի խոսքերն են: Արմավիրցին, գյումրեցին, վանաձորցին, կապանցին եւ այլք, բոլորն իրենց ծառը տնկեցին զորամասում: Բացի բուն ծառատունկի խորհուրդից, սա խորհրդանշական է նաեւ մեկ այլ առումով. հայ զինվորը կապվում է իր զորամասի հետ, նույնիսկ զորացրվելուց հետո, ամեն հարմար առիթ նա կօգտագործի գալու հարազատ զորամաս եւ տեսնելու իր «մեկ ծառը»:

### Հայ մանուկի «մեկ ծառը»

Բազմագույն փոքրիկ բահերը, ցնցուղները ձեռքերին` Ջարբախի թիվ 174 մանկապարտեզի երեխաները ծնողների հետ սպասում էին, եւ ամեն մի նոր տնկած ծառը իրենց ցնցուղից ջրում: «Ամենեւին էլ պատահական չէ, որ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախաձեռնած այս մասշտաբային ծրագիրը մեկնարկել է դպրոցներից ու մանկապարտեզներից: Ցեղասպանությունը հայոց պատմության ամենաողբալի էջն է, եւ անմեղ զոհերի ոգեկոչման, նրանց հիշատակի հավերժացման լավագույն ձեւը կյանքի շարունակությունը խորհրդանշող այս ծառատունկն է: Միջոցառման սկիզբը դրվում է հենց մանկապարտեզում` նոր կյանքի սկիզբը խորհրդանշող այս գեղեցիկ օջախում», մանկապարտեզի բակում հայտարարեց Համաշխարհային հայկական կոնգրեսի ռեֆերենս **Սերոբ Անտինյանը**: Մանկապարտեզի վարիչ **Անահիտ Մուրադյանը** շնորհակալություն հայտնեց Համաշխարհային հայկական կոնգրեսին, Ռուսաստանի հայերի միությանը` ի դեմս նախագահ Արա Աբրահամյանի. «Մեր մանկապարտեզը մեծ ուրախությամբ է միանում ձեր նախաձեռնությանը եւ պատրաստակամություն է հայտնում, որ բոլոր տնկած ծառերը պահպանվելու են»: Իսկ մանուկները նույնիսկ ձեռքերով էին օգնում մեծահասակներին` հող լցնելով նորատունկ ծառերի վրա: Հենց մանուկների ներկայությամբ եւ «օգնությամբ» տնկած ծառերով է, որ ամբողջովին իմաստավորվում է այս նախաձեռնությունը: Տնկին ձեռքին հայ մանուկը ոչ միայն նոր կյանքի սկիզբն է, այլեւ մեր երկրի տնտեսականության ամրապնդման, բարգավաճման, հզորացման լավագույն եւ ամենապերճախոս հույսը:

### Ամեն հայի «մեկ ծառը»

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության այս նախաձեռնությունը մեկնարկեց մարտի 31-ին: Ինչպես նշում է կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի փոխնախագահ **Մարիամ Մարտիրոսյանը**, սա 5-ամյա ծրագիր է. «Մինչեւ Ցեղասպանության 100-ամյա տարելիցը մենք կտնկենք 1,5 մլն ծառ», վստահեցնում է Մարիամը: Իսկ այդ «մենքը» բոլորս ենք, եւ ոչ միայն երիտասարդներս, բոլորս` յուրաքանչյուր հայ: Սա ազգային ծրագիր է, «Վերածննդի այգին», եթե իրականանա (իսկ պետք է որ իրականանա), յուրաքանչյուր հայի համար ոչ միայն խորհրդանշելու է 1,5 մլն անմեղ զոհերին, այլեւ «1,5 մլն նոր կյանքերը», լուծելու է երկրի առջեւ ծառացած «1,5 մլն» բնապահպանական խնդիրներ, հայ երիտասարդին «1,5 մլն անգամ» ներգրավվելու է հասարակական կյանքում, ուրեմն ի՞նչ է սա, եթե ոչ պետության համար ռազմավարական նախագիծ:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Հ.Գ.-ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտ ընկերս, որն այժմ Մոսկվայում...շինարարություն է անում, տեղեկանալով Ռուսաստանի հայերի այս նախաձեռնության մասին, խնդրեց ինձ մինչեւ իր վերադարձը, նաեւ իր փոխարեն ծառ տնկել: Ես էլ, մանավանդ հաշվի առնելով ամենուր նկատվող խանդավառությունը, մի քանի ծառ տնկեցի` «իմ մեկ ծառը» միլիոն ու կեսից:**



AZG NEW PDF.qxd 01/04/2010 22:45 Page 1



Թեպետ Էրդողանը գնահատել է Մերկելի հետ իր բանակցությունները «անհավատալի հաջողակ», բայց գերմանական մամուլի «Ժպիտ՝ առանց ցանկության» վերնագիրը մատնում է՝ Մերկելի դիվանագիտական քաղաքավարի կեցվածքը նույնքան անզիջում եղավ, երբ հարցը Թուրքիայի ԵՄ լիիրավ անդամակցությանն առնչվեց: Իսկ ընդհանրապես, դատելով գերմանական մամուլի հրապարակումներից, երկօրյա այցին երկու երկրների կառավարության՝ իրար մոտ կանգնած ղեկավարներն այդպես էլ տարածությունը չկրճատեցին՝ միգուցե Անկարա-Բեռլին տարբերություններն առավել հստակ ընդգծվեցին: Էրդողանը շաբաթավերջին Լիբիա այցի ճանապարհին իրեն ուղեկցող լրագրողներին հարցրել էր՝ «Որտեղի՞ց այդքան ատելություն Թուրքիայի հանդեպ: Չեմ հասկանում: Գերմանիայի կանցլերից չէի սպասում»: Իսկ թուրք ընդդիմադիր Դենիս Բայքալը մերժեց ի թիվս այլ ընդդիմադիրների Մերկելի հետ Գերմանիայի դեսպանատանը այցի առիթով կազմակերպված ընդունելությանը մասնակցելու հրավերը:

Թուրք-գերմանական հարաբերությունների համար լավագույն ժամանակները չեն, այսպես մեկնաբանեցին նաեւ հեռուստաընկերությունները՝ ընդգծելով ԵՄ անդամակցության եւ ինտեգրացման խնդիրների վերաբերյալ, Իրանի հարցում պատժամիջոցներ սահմանելու, Կիպրոսի խնդրում երկու երկրների տարակարծությունները: Նրբանկատ մի շեշտ էլ ուրվագծվեց՝ համատեղ էներգետիկ, ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսական ծրագրերը (գազը Թուրքիայի տարածքով դեպի Կենտրոնական Եվրոպա հասցնելը) սերտացնում են երկու երկրների հարաբերությունները: Այս առումով միայն Մերկելի պաշտոնական այցը մի քիչ թուլացրեց առկա լարվածությունը:

Քաղաքական վերլուծաբաններն ընդգծում են այն, ինչ առանց մասնագիտական ակնոցի էլ ակնհայտ է՝ Մերկելն ու Էրդողանը իրենց բնույթով եւ ոճով տարբեր գործիչներ են, երկօրյա այցի բազմաթիվ հանդիպումների ժամանակ էլ ոչ մեկը մյուսի լեզվով չխոսեց, բայց դիվանագիտական ձեւաչափը անձնական լավ հարաբերություններ երեւակեց:

Նույն լեզվով չեն խոսում, ջերմ բնույթ չեն կրում նաեւ երկու հասարակությունների՝ կամ, ավելի ճիշտ, Գերմանիայում ապրող 3 միլիոն թուրքերի եւ գերմանացիների միջեւ կապերը: Որքան էլ գերմանացիները դժգոհում են, թե թուրքերի մեծ մասը գերմաներեն չի հասկանում, չի խոսում, եւ օրինակ՝ Բեռլինում դպրոցներ կան, որտեղ գերմանացի երեխաները դասարանում փոքրամասնություն լինելով՝ ավելի շուտ թուրքերենը, քան գերմաներենն են բարելավում, մնում է պարզապես բարձրաձայն հնչած տրտունջ, ոչ ավելի: «Ես դեմ չեմ օտարերկրացիներին, բայց նրանք, ովքեր այստեղ ապրելով մեր լեզվով չեն խոսում, չեն ինտեգրվում, պիտի իրենց երկիրը գնան: Երբ սա պահանջում ես, թուրքերն ասում են՝ դուք եք մեզ կանչել, բերել, մենք ենք ձեր երկիրը կառուցել, հիմա քշո՞ւմ եք», մեր զրույցի ընթացքում անկեղծանում է 30-ամյա գերմանացի մի արհեստավոր:

2008-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը, Գերմանիա այցելելով, դժգոհություն էր հայտնել, թե այստեղ ապրող թուրքերը գերմանացվում՝ ձուլման են ենթարկվում՝ դա բնութագրելով «մարդկության դեմ ոճրագործություն»: Թուրք վարչապետն իր երկիրը որակել էր «քավության նոխազ» Գերմանիայի համար, որովհետեւ Մերկելը գերմաներեն սովորելն ինտեգրացման անհրաժեշտություն էր նկատել:

«Որքա՜ն մեծ է Մերկելի վրա ճնշումը, որ նա մի քանի օրվա մեջ 180 աստիճանով փոխել է իր ինտեգրացիոն քաղաքականությունը: Վարչապետ Էրդողանի՝ Գերմանիայում թուրքական վարժարաններ բացելու պահանջը նա մերժել էր օրեր առաջ, իսկ հիմա իր երկօրյա այցի ժամանակ դրական է արտահայտվել», մեր զրույցում դժգոհում է 40-ին մոտ մի գերմանացի: «Եթե Գերմանիան ուրիշ երկրներում դպրոցներ ունի, ինչպես աշխարհի շատ վայրերում, Թուրքիան էլ կարող է Գերմանիայում դպրոցներ ունենալ», ասել է Մերկելը Անկարայում՝ նկատի ունենալով, անշուշտ, երկլեզվյան դպրոցները:

Մարիա Բյոհմերը (ՔԴԿ) ՝ դաշնային կառավարության ինտեգրացիոն հարցերով հանձնակատարը ասել է, թե Գերմանիայում հիմա էլ կան թուրքերեն դասաժամերով դպրոցներ, ինչպես նաեւ գերմանացիների տնօրենությամբ վերահսկվող թուրքական մասնավոր դպրոցներ: Երկօրյա այցի ընթացքում տիկին Բյոհմերը նկատել է տվել, թե գերմանական դպրոցներում թուրքերենին առավել շատ դասաժամեր կարելի է հատկացնել, իհարկե, գերմաներենի կենտրոնական դերը պահպանելով: Մերկելը շեշտել է, թե խոսքը ձուլման մասին չէ, կողմ է «երկլեզվյան» դպրոցին: «Ով Գերմանիայում է ապրում, պիտի տիրապետի գերմաներեն լեզվին: Գերմանիայում թուրքական դպրոցը չպիտի ծառայի այն բանին, որ թուրք երիտասարդները գերմաներեն չսովորեն: Վերջապես ուզում ենք, որ թուրքերի հաջորդ սերունդն առավել հաջողակ լինի, դառնա գիտնական, ձեռնարկատեր, ուսուցիչ»: Անգելա Մերկելը Ստամբուլում այցելել է տեղի գերմանական վարժարան՝ Alman Lisesi: 1868-ին հիմնված այս հաստատությունում կրթություն ստացողների 82 տոկոսը՝ 800-ից ավելի աղջիկներ եւ տղաներ թուրք են, 18 տոկոսը երկքաղաքացիություն ունեն եւ օտարերկրացիներ են: Սա կարո՞ղ է մոդել լինել Գերմանիայի համար: Դժվար թե. Ստամբուլի գերմանական դպրոցում թուրքերեն միայն 2 տարի են սովորում, եթե նույնը կիրառվի Գերմանիայում՝ թուրքական դպրոցում գերմաներենի ուսուցումը 2 տարի տեւի, հազիվ թե բավարարի կառավարության պահանջները: «Բիլդը» մինչեւ ապրիլի 1-ը հարցում է անցկացնում իր ընթերցողների շրջանում: Մարտի 31-ի տվյալներով՝ ընթերցողների 86 տոկոսը դեմ է թուրքական վարժարաններին, միայն 14 տոկոսն է դրանց անհրաժեշտությունը Գերմանիայում տեսնում: Կողմ արտահայտվածների թվում է նախկին կանցլեր Շրյոդերը, որը մարտի 31-ին Մերկելի այցի մասին իր կարծիքն է ներկայացրել «Բիլդի» էջերում: 2004-ից Թուրքիայի ԵՄ լիիրավ անդամակցության ջատագով Շրյոդերը երկլեզվյան դպրոցները համարել է Թուրքիայի Եվրոպականացմանը ծառայող գործոն:

Թուրքիա կատարած այցի ժամանակ էլ Մերկելը շարունակեց մերժել Թուրքիայի ԵՄ անդամակցությունը: Թեպետ իր խոսքում նրբանկատ ակնարկ է արել, թե միգուցե «արտոնյալ գործընկերություն» բառակապակցությունը այնքան էլ լավ ընդունելություն չի գտնում Թուրքիայում, բայց չի էլ զիջել իր դիրքերը՝ հայտնելով, թե անդամակցության մասին բանակցությունները շարունակվելու են: Էրդողանը վստահեցրել է, թե իր կուսակցությունը այս շաբաթ խորհրդարանին է ներկայացնելու ժողովրդավարության զարգացման բարեփոխումների փաթեթը, որ համապատասխանում է ԵՄ պահանջներին: «Լավ է, որ Մերկելը հիշյալ բառակապակցությունը հաջողված չի համարել, «արտոնյալ գործընկերություն»-ը ընդհանրապես պիտի դուրս մղվի քաղաքական բանավեճից», պահանջում է ԳԴՀ նախկին կանցլեր Շրյոդերը: Նա հիշեցնում է, որ Էրդողանի ղեկավարությամբ այդ երկիրը համարձակ բարեփոխումների ուղին է բռնել՝ ժողովրդավարացում, քրդերի հարց, Հայաստանի հետ սկսված փոխադարձ ըմբռնողության գործընթաց: Թուրքիան աշխարհի 20 մեծ տնտեսություն ունեցող երկրներից է :Տնտեսական աճի տեմպերը հսկայական են, եւ այս հնարավորությունը Գերմանիան պիտի օգտագործի, գրում է նախկին կանցլերը «Բիլդի» իր հոդվածում՝ Թուրքիայի ԵՄ անդամակցության իր պահանջը հիմնավորելով:

# Խաղաղության՝ թռիչքը քարացրած աղավնին

## *Քաղաքական ծանրակշիռ թեմաներով Բեռլին-Անկարա տարակարծությունները մնում են*

Այցի երկրորդ օրը Էրդողանը վերահաստատել է իր երկրի՝ ԵՄ անդամակցության ցանկությունը: «Մենք չենք ուզում բեռ դառնալ, ուզում ենք բեռը կիսել, ֆորումի ժամանակ ասել է Էրդողանը, հնարավորություն է տրված ապագան միասին կերտելու, Թուրքիան ակնկալում է Գերմանիայի սատարումն այս հարցում»: Էրդողանը հիշեցրել է, որ երկու երկրներին իրար է կապում ընդհանուր երկար պատմությունը:

Գերմանիայի տնտեսության եւ առեւտրի պալատի նախագահ Հանս Հայնրիխ Դրիֆֆմաննը գովել է երկու երկրների տնտեսական կապերը. «Տնտեսապես Թուրքիան արդեն Եվրոպային է պատկանում»: Նա կարեւոր է համարել թուրք գործընկերների ճամփորդելու պայմանները դյուրացնելու հարցը, նկատել տալով, որ Գերմանիան Թուրքիայի համար առեւտրային ամենամեծ գործընկերն է: Նվազագույնն այս մի հարցում՝ Էրդողանն ու Մերկելը համակարծիք են եղել: Երկու երկրների առեւտրաշրջանառության ծավալը մոտ 25 մլրդ եվրո է, 4000-ից ավելի գերմանացի գործարարների ներկայությունը Թուրքիայում վկայում է տնտեսական ուժեղ հարաբերությունների մասին:

Երկօրյա այցը չհարթեց նաեւ աշխարհի հզորների ուշադրության առանցքում սեւեռված տարակարծությունները Իրանի հարցում պատժամիջոցների առումով: Մերկելն ափսոսանք է հայտնել, որ Իրանի առաջնորդների հետ միջուկային ծրագրերի մասին զրույցը մնացել է առանց առաջընթացի: Իսկ Թուրքիայի ղեկավարությունը շեշտել է Իրանի եւ Թուրքիայի հին բարեկամությունը: Իրանը Թուրքիայի համար 2-րդ էներգակիրն է: Դիվանագիտությունը մնում է կարեւորագույն միջոցը, ասել է Էրդողանը վստահեցնելով, թե Թուրքիան ամեն ինչ կանի «միջին մի ուղի» գտնելու համար: Նա հույս է հայտնել, որ դա ապրիլին Վաշինգտոնում կայանալիք կոնֆերանսի ժամանակ կարող է լինել:

Մերկելը Թուրքիա գալով Էրդողանին նվեր էր մատուցել՝ խաղաղության կավե աղավնի: Խաղաղության պլասֆորմը տարփողող երկրում փխրուն կավը որքա՞ն կդիմանա:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

ԵՄ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

# Մշակվել է Ռուսաստանի արդիականացման ծրագիր

Եվրոմիության փորձագետները մշակել էին Ռուսաստանի արդիականացման ծրագրի նախագիծ, որը փետրվարի կեսերին հանձնվել է ՌԴ կառավարությանը: Դրանից հետո Ռուսաստանն ու Եվրոպան կազմել էին «Գործընկերություն հանուն արդիականացման» ծրագրում ընդգրկվելիք միջոցառումների ցանկը, որը ապրիլի սկզբներին պետք է փոխանցվի ԵՄ ղեկավարությանը: Այդ մասին հաղորդում է «Կոմերսանտ» թերթը:

Թերթի տվյալներով, ՌԴ տնտեսական զարգացման նախարարությունը միջգերատեսչական մակարդակով արդեն համաձայնեցրել է իր առաջարկությունները «Գործընկերություն հանուն արդիականացման» ծրագրի շրջանակներում: Առաջնահերթ միջոցառումներից մեկը ՌԴ-ում պայքարն է կաշառակերության դեմ:

ԵՄ փորձագետները ծրագրում ընդգրկել են ՌԴ տնտեսության արդիականացմանն ուղղված Մոսկվա-Բրյուսել փոխգործողության 10 սկզբունք: Դրանց թվում են իրավունքի գերակայությունը, տարբերակված եւ մրցունակ տնտեսության ստեղծումը, գիտության եւ հետազոտությունների ոլորտում համագործակցության ամրապնդումը, ուղղակի ներդրումների ավելացումը, շուկաների միասնացումը, առեւտրի ամրապնդման ընդհանուր քաղաքականությանը ՌԴ միացումը, մարդկանց միջեւ շփումների ամրապնդումը:

Ռուսաստանցի տնտեսագետներն իրենց հերթին առաջարկել են ավարտել ՌԴ-ԵՄ բազային համաձայնագրի ստորագրմանն ուղղված բանակցությունները, ՌԴ տարածքում արտադրությունների ստեղծման միջոցով եվրոպական ձեռնարկությունները ներգրավել Ռուսաստանի տնտեսության արդիականացման մեջ, ՌԴ-ում համատեղ ստեղծել տեխնոհավաքակայաններ եւ էներգետիկ ոլորտում իրագործել նորացման նախագծեր:

# Հնդկաստանում ստեղծվում է բնակչության կենսաչափական տվյալների բազա

Հնդկաստանում մեկնարկում է մարդահամարի լայնընդգրկուն ծրագիր: Նախատեսվում է լուսանկարել 15 տարին լրացած բոլոր բնակիչներին եւ վերցնել նրանց մատնահետքերը: Այդ տվյալների հիման վրա կստեղծվի հնդիկների կենսաչափական տվյալների ազգային բազա, հաղորդում է BBC-ն:



Հետագայում դրա հիման վրա քաղաքացիներին կտրվեն անձը հաստատող քարտեր: 1,2 միլիարդանոց երկրում տվյալների հավաքումից հետո մեկ տարվա ընթացքում բնակչությունը կդասակարգվի ըստ սեռի, կրոնական պատկանելության, զբաղմունքի եւ կրթության մակարդակի:

Եկող տարի մարդահամարի 2,5 մլն մասնակիցները կայցելեն ավելի քան 7 հազար քաղաք եւ 600 հազար գյուղ, բնակիչներին կհարցնեն, թե տներում կամ բնակարաններում կա՞ն արդյոք ինտերնետ, խմելու ջուր, զուգարան:

Բնակիչների թվի հաշվառումը տեղի կունենա 2011-ի փետրվարի 9-28-ը: Տվյալների հաշվարկը կտեւի 11 ամիս: Իշխանությունները այդ միջոցառումների անցկացմանը կհատկացնեն մոտ 1,3 մլրդ դոլար: Մարդահամարի վերջնական տարբերակը կթողարկվի 2011-ի կեսերին, իսկ նոյեմբերից կտրվեն առաջին նույնականացման համարները:

«Հնդկաստանի 2011 թ. մարդահամարը աշխարհում նման առաջին նախագիծն է թե՛ տվյալների հավաքման մոդելի կառուցման եւ թե՛ խնդիրների ընդգրկման առումներով: Ավելի քան 1 մլրդ մարդու նույնականացումը եւ ինքնության վկայականների թողարկումը ամենախոշոր վարչական-պետական խնդիրն է մարդկության գոյության ընթացքում», ասել է Հնդկաստանի կառավարության անդամներից մեկը, որի խոսքերը մեջբերում է Ինտերֆաքս գործակալությունը:

1872-ից սկսած Հնդկաստանում մարդահամարներ անցկացվում են 10 տարին մեկ:

# Բեռլուսկոնին համբուրեց Քադդաֆիի ձեռքը

Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի վարքագիծը հերթական անգամ սկանդալի պատճառ է դարձել: Իտալական թերթերի հրապարակած լուսանկարներում երեւում է, թե ինչպես Բեռլուսկոնին քծնանքով համբուրում է Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիի ձեռքը: Արաբական պետությունների լիգայի գագաթաժողովում տեղի ունեցած այդ միջադեպը տեսագրվել եւ անմիջապես հայտնվել էր YouTube կայքէջում:



Տեսագրության մեջ երեւում է, թե գագաթաժողովում սիրառատ Բեռլուսկոնին ինչպես է ջերմորեն շնորհավորում լիբիացի ղեկավարին, բռնում եւ համբուրում է նրա ձեռքը, դրանով իսկ իր համակրանքն արտահայտելով Քադդաֆիի հանդեպ: Սակայն Քադդաֆիի դեմքի արտահայտությունից զգացվում է, որ Բեռլուսկոնիի արարքը շփոթեցրել, գուցե նաեւ վրդովեցրել է նրան. նա տհաճությամբ ձեռքը մաքրում է՝ քսելով հագուստին: Դա զարմանալի է Լիբիայում ընդունված խիստ բարքերի պայմաններում, իսկ Քադդաֆին սովորույթները պահպանում է նույնիսկ մանրուքներում:

Բեռլուսկոնին արեւմուտքի միակ ղեկավարն էր, որին Արաբական պետությունների լիգան հրավիրել էր մասնակցելու իր գագաթաժողովին: Նա վաղուց բարեկամական հարաբերություններ է պահպանում Լիբիայի ղեկավարի հետ, ինչին հավանություն չի տալիս Հռոմի արեւմտյան դաշնակիցների մեծամասնությունը:

AZG NEW PDF.qxd 01/04/2010 22:39 Page 1



# Մի խոչընդոտէք առողջ քննադատությանը

## Դարչյալ Օպերային թատրոնի շուրջ

Տարօրինակ է եւ զարմանալի, երբ մասնագետների խոսակցությանը միջամտում է մի անձ, որը չունի բավարար դաստիարակություն, օպերային թատրոնի հետ կապված իմ եւ մի շարք երաժշտագետների կողմից բարձրացված քննարկվող հարցերի վերաբերյալ: Խոսքը արվեստագիտության դոկտոր, երաժշտագետ Աննա Ասատրյանի մասին է: Իր հոդվածում («**Ազգ**», **11.03.10**) նա չի քննարկում, ընդունում կամ պատճառաբանված մերժում այս կամ այն տեսակետը, այլ, իմաստազուրկ խոսքերի տարափով միանգամից սկսում է անձնական վիրավորանք հասցնել մասնագետ արվեստագետների, որոնք ներդրում ունեն մեր երաժշտական կյանքի կառուցման գործում, որոնց մեջ կան նաեւ իր ուսուցիչները: Վիճել, վիճարկել կարելի է եւ անհրաժեշտ է, բայց...

Հոդվածը երկու ուղղություն ունի.

ա) փորձել անխնա կերպով զրպարտել, վարկաբեկել պրոֆեսիոնալ մարդկանց,

բ) ճոռոմաբանությամբ գովաբանել կեղծը, թերին, անորակը:

Կոպիտ խոսքի էպիդեմիան, որով վարակված է այս հոդվածագիրը, արտացոլում է միայն իր ներքին աշխարհը, ուրիշ ոչինչ: Ակներեւ է, որ նա չի կրում իր մեջ պրոֆեսիոնալ ոչ մի չափանիշ: Նրա հոդվածը հիշեցնում է սովետական ժամանակաշրջանի քաղկոմի կամ շրջկոմի ֆանատիկ-կոմերիտական ինստրուկտորի զեկույց՝ կարգին մարդկանց զրպարտելու, սեւը ճերմակ ներկայացնելու, կեղծ, սուտ թվեր բերելու եւ վերեւներին շողոքորթելով դուր գալու անկասելի մոլուցքով:

Վտանգավորն այստեղ, հոդվածի ներքին տոնն է, սպառնալիքը եւ դեմագոգիան: Նրա հոդվածը կարդացողն անմիջապես կհասկանա, թե 1948-ի ժդանովշչինայի ամբողջ խոհանոցը գերազանցապես յուրացրած (ե՞րբ է հասցրել) նրա ոգով տոգորված, ինչպիսի վտանգավոր մարդ է հայտնվել երաժշտական աշխարհում, ընդհանրապես մեր հասարակական կյանքում: Սրա մասին՝ քիչ հետո:

Օպերային թատրոնի ներկայացումների մակարդակի, թատրոնի գործելակերպի մասին քննադատորեն գրել են վերջին 6-7 տարիներին (այլ ոչ թե անցած տարվա աշնանից, ինչպես պնդում է հոդվածագիրը), շատերը՝ արվեստագիտության դոկտորներ Մ. Ռուխկյանը, Ս. Սարգսյանը, Ա. Արեւշատյանը, արվեստագիտության թեկնածուներ Ա. Սարյանը, Ա. Գրիգորյանը, արվեստի հարցերում վաստակաշատ ու փորձառու լրագրողներ Ն. Գոմցյանը, Կ. Միքայելյանը, Մ. Մելոյանը, Ս. Ավագյանը, երիտասարդ, շնորհալի Ն. Հախվերդյանը եւ ուրիշներ: Այնպես որ, մեծամասնությունը օպերային թատրոնի վիճակը արդարացիորեն քննադատողներն են, այլ ոչ հակառակը, ինչպես փորձում է՝ օգտվելով իր տերմինաբանությունից, «զոռբայությամբ» մարդկանց վզին փաթաթել իր կեղծ կարծիքը հոդվածագիրը (ինքը չի նշում Օպերային թատրոնով զբաղվող ոչ մի երաժշտագետի անուն, որովհետեւ բացի իմ նշած երաժշտագետներից, չկան ուրիշ զբաղվողներ):

Նա, օպերային թատրոնի թվացյալ հաջողությունների մասին իր հոդվածում իբրեւ «փաստարկ» թվարկում է, թե ո՞վ եւ ե՞րբ է կոչում ստացել, թվում է անուններ, ներկայացումներ, նշում է դահլիճում մարդկանց բազմության քանակը: Ուրիշ ոչինչ: Ա. Ասատրյանի հոդվածում չկա վերլուծական միտք եւ մասնագիտական սեփական տեսակետ, դիրքորոշում: Նա մտածում եւ խոսում է չինովնիկական կլիշեներով:

Եթե խոսենք ճարպկության, պաշտոններ ձեռք գցելու մասին, ինչում նա մեղադրում է օպերային թատրոնի քննադատներին, ապա հոդվածագրի «անցած ուղին» ցույց է տալիս հենց իր պատկանելիությունը այդ տեսակին: Արդ, ինչպե՞ս է լինում, որ ոչնչով աչքի չընկած այդ անձը հայտնվում է ե՛ւ Ավագանու, ե՛ւ Հանրային խորհրդի կազմում, Մշակույթի նախարարության հրատարակչական հանձնաժողովի կազմում, դառնում ինստիտուտի տնօրենի տեղակալ, գիտքարտուղար եւ բաժնի վարիչ՝ վարելով այդ պաշտոնները միաժամանակ: Գիտական ի՞նչ ներդրումների համար:

Ինչ վերաբերում է օպերային թատրոնի այսօրվա վիճակի մասին արտահայտած իմ համոզմունքներին, դրանք մնում են անփոփոխ: Իրավիճակն այնտեղ անմխիթար է: Դահլիճի երբեմն լեցուն լինելը դեռ ոչինչ չի նշանակում: Թատրոնի տնօրենը լավ գիտե, ինչպես դա կազմակերպել: Լինում են նաեւ ներկայացումներ, երբ դահլիճում ավելի քիչ մարդ կա, քան բեմում կամ նվագախմբում: Խնդիրը դա չէ, այլ այն, որ թատրոնը չի կարողանում ստեղծել իրական ստեղծագործական, աշխատանքային մթնոլորտ, մշակել ճիշտ գեղարվեստական քաղաքականություն: Հոդվածագիրը գիտե՞ արդյոք, որ մարտի սկզբներին «Ալեկո» օպերայի ներկայացման ժամանակ նվագախումբը եւ բեմը «կորցրին» իրար: Մինչեւ դիրիժորն ու նվագախումբը «գտան» իրար, այնուհետեւ՝ երգիչներին, բեմում երգում էին «a capella» (առանց նվագակցության): Ահա ցայտուն մի օրինակ հոդվածագրի պաշտպանյալ «ստեղծագործական վերելքի մեջ գտնվող» օպերային թատրոնի կյանքից:

Օպերային թատրոնն իսկապես «վերելքի մեջ է»: Նվագախումբն, օրինակ, օրերով կարող է փորձ չանել, մենակատարների հետ շաբաթներով կարող են չփորձել, դերերը սխալ բաշխվել: Թատրոնում հաշվվում է 14 տենոր, մի այդքան էլ՝ բարիտոն: Ըստ էության երգող 2-3 տենոր կա եւ 3-4 բարիտոն: Մյուսնե՞րը... Զայնային մյուս կատեգորիանե՞րը...

Գեղարվեստական խորհրդի եւ թատրոնի ղեկավարության աշխատելաձեւի դրսեւորման մի այլ փայլուն ապացույցներից մեկն էլ այն հավաքն էր (11.03.10), որ պետք է տեղի ունենար օպերային թատրոնում «Սպարտակ» ներկայացումը «Ոսկե դիմակ» մոսկովյան մրցանակաբաշխությանը ներկայացնելու համար: Հավաքի կազմակերպումը հանձնարարված էր խորհրդի անդամներից մեկին: Հրավիրվածներից ոչ մեկը՝ երաժշտագետներ Ա. Փահլեւանյան, Ա. Սարյան, Մ. Ռուխկյան, Ս. Սարգսյան, Ա. Արեւշատյան, Ժ. Զուրաբյան, Կ. Ձաղացպանյան, չընդունեցին հրավերը, մերժեցին մասնակցել: Պատճառը կարծում եմ, շատ հասկանալի է: Ոչ ոք չի ուզում գործ ունենալ թատրոնի այսօրվա ղեկավարության հետ: Ընդ որում, հրավիրողը խնդրում էր միայն լավ խոսքեր ասել (առանց խնդրելու էլ «Սպարտակի» բեմադրությունն արժանի է լավ գնահատականի, ըստ մասնագետների): Ա՜յ քեզ բան: Այս ո՞ւր ենք հասել: Ահա այս եւ այլ տիպի «դրսեւորումներով» լի մթնոլորտի ջատագովն է հոդվածագիրը:

2001-ին Բեյրութում ներկայացված «Տրավիատայի» հետ կապված խայտառակության մասին մինչեւ հիմա խոսում են Բեյրութում:

Օպերային թատրոնի արտիստական անձնակազմի մեծ մասին ես ճանաչում եմ եւ նրանց հետ ունեցել եմ եւ ունեմ ընկերական, բարեկամական եւ ստեղծագործական շատ լավ հարաբերություններ եւ գիտեմ ու նորից եմ կրկնում, որ թե՛ երգչական կազմում, թե՛ նվագախմբում ու երգչախմբում կան շնորհալի, օժտված, նույնիսկ տաղանդավոր երաժիշտներ, կա բավարար պոտենցիալ, բայց ապաշնորհ ղեկավարության հետեւանքով ամեն ինչ կորչում է, լավը աստիճանաբար վատանում է, քիչ թե շատ եղած պոտենցիալ հնարավորությունները չեն զարգացվում ու նրանք կամաց-կամաց մարում են, ստեղծվում է մի խառնաշփոթ իրավիճակ, որտեղ վիրավորված ու շփոթված արտիստները չեն հասկանում ինչ անել: Օպերային թատրոնի ղեկավարի փոփոխությունը անհետաձգելիորեն անհրաժեշտ է:

Հիմա ուզում եմ անդրադառնալ խնդրի բուն էությանը:

Ինչ վտանգավոր դեմագոգ է Ա. Ասատրյանը: Իր հոդվածում նա ուզում է ինձ եւ իմ կոլեգաներին ներկայացնել իբրեւ այնպիսի «պատրանք ստեղծողներ, թե Հայաստանում ամեն ինչ վա՛տ է, շա՛տ վատ», «ուրիշ տեղից ղեկավարվող», «մեր հայրենիքի ազգային անվտանգության դեմ» գործող անձեր... Սահմռկեցուցիչ է: Այսպիսի մեղադրանքի համար, ոչ վաղ անցյալում, ինձ եւ իմ կոլեգաներին առանց դատ ու դատաստանի կքշեին Սիբիր: Հասկանալի է, թե ինչ տիպի երեւույթի հետ գործ ունենք: Երիտասարդ տարիքում այդպես փայլուն կերպով տիրապետել զրպարտչական մեքենային եւ սովետական ամբիոնային ելույթ հիշեցնող «հայրենասերի» կեցվածքով փորձել վարկաբեկել, նոր եւ առայժմ եզակի երեւույթ է մեր իրականության մեջ: Հասարակության ուշադրությունը ուզում եմ հրավիրել հոդվածագրի լեքսիկոնի վրա. «մերօրյա հերոսներ», «ո՞ւմ է դա ձեռնտու», «ագրեսիվ փոքրամասնություն», «պաշտոններ ձեռք գցելու մոլուցքով մարդիկ», «գրոհով ձեռք բերել»: Այս բոլորը չի՞ հիշեցնում արդյոք ստալինա-խրուշչովա-բրեժնեւյան տարիների թերթերի առաջնորդողները, համագումարները...

Ակամա հիշում ես «բժիշկների գործը», 1948-ի ժդանովշչինան, խրուշչովյան բռունցքի թափահարումը եւ առաջադեմ արվեստագետներին ուղղված հայհոյախառն ելույթները, բրեժնեւյան տարիների գործելաձեւը՝ հայրենասիրության, ազատ խոսքի եւ արդարության համար մարտնչող մտավորականների աքսորումը, 80-ականների վերջին, Կոմկուսի համագումարներից մեկում, Միջին Ասիայից մի կոլխոզնիկուհու վայրահաչ ելույթը, ջերմամիջուկային ֆիզիկայի աշխարհահռչակ գիտնական Ա. Սախարովի դեմ...

Ա. Ասատրյանը «քաղաքական աստառ» տալու վարպետ է: Չի՛ անցնի: Ժամանակներն ուրի՛շ են: Հոդվածագրին ուզում եմ հիասթափեցնել: Ո՛չ, մենք դժգոհ չե՛նք եւ ունե՛նք խիզախություն սիրել մեր Հայրենիքն այնպես, ինչպես որ այն կա, իր բոլոր դժվարություններով: Դրա ապացույցն իմ եւ իմ անվանի կոլեգաների ամբողջ գործունեությունն է, ներդրումը՝ միտված մեր Արվեստի զարգացմանն ու տարածմանը: Մեր Հայրենիքի ազգային անվտանգությունը կարող է վտանգվել հոդվածագրի եւ իր նմանների, ոչ լիարժեք մասնագետների առկայության պատճառով:

Մեր դժգոհությունը կարող է արտահայտվել եւ արտահայտում ենք մեկ բանում՝ հոդվածագրի նման «մասնագետի», վտանգավոր դեմագոգի ու կարիերիստի ներկայությունը մեր հասարակության մեջ, մեր Արվեստում անհանդուրժելի է: Չպետք է թույլ տալ, որ այդ տեսակը բազմանա մեր հասարակության մեջ եւ ամբողջովին կլանի մեր սքանչելի մշակույթի պտղաբեր այգին:

SOS! Զգուշանալ է պետք: Վտանգավոր նախադեպ է:

Ա. Ասատրյանի այս հոդվածը ընդամենը մի «գեղարվեստական» զրպարտագիր է:

**Հ.Գ.** Ես համոզված եմ, որ Ա. Ասատրյանն այս հոդվածը գրել է ուրիշի պատվերով: Ինքն էլ չափսոսալով իմ եւ իմ կոլեգաների հետ ունեցած նորմալ հարաբերությունները, երկար չմտածելով, գրիչը վերցրել ու փորձել է անազնիվ, անպարկեշտ ձեւով պախարակելով կոլեգաներին՝ պաշտպանել մի օջախ, որը հնարավոր չէ պաշտպանել, իր չափից ավել խոնցելիության եւ վարկաբեկված լինելու պատճառով: Եվ դա փորձել է անել «Հռոմի Պապից էլ ավել կաթոլիկ լինելու» սկզբունքով՝ չխորանալով բառերի եւ արտահայտությունների ընտրության մեջ, շփոթելով «կարելի է-չի կարելի» բարոյական հասկացությունները:

Այլեւս չեմ անդրադառնալու Ա. Ասատրյանի զրպարտչական գրություններին:

**ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**Արվեստի վաստակավոր գործիչ**
**Դիրիժոր**

ԼՐԱՑՈՒ

## Նշվեց Դանիել Վարուժանի 125-ամյակը

**«Հայ ըլլալը ճակատագիր է...». այսպես է բնորոշել հայ ժողովրդին բաժին հասած այն ցավն ու տառապանքը ականավոր բանաստեղծ Դանիել Վարուժանը, որի ծննդյան 125-ամյակը նշվեց Գ. Սունդուկյանի անվ. ակադեմիական թատրոնում: ՀՀ մշակույթի նախարարության պետական հոբելյանական հանձնաժողովը երեկոյի ծրագրում ընդգրկել էր Երեւանի Դրամատիկական թատրոնի խաղացանկից Պերճ Զեյթունցյանի «Մեծ լռություն» ներկայացումից հատվածներ, որտեղ Դանիել Վարուժանի դերակատարն էր Գուժ Մանուկյանը, Կոմիտասինը՝ Վլադիմիր Մսրյանը, Ռուբեն Սեւակինը՝ Արթուր Ութմազյանը եւ այլն: Երեկոյի ընթացքում ընթերցվում էին բանաստեղծի ստեղծագործությունները: Իսկ երգչուհի Աննա Մայիլյանը իր եռյակով փայլեց հրաշալի կատարումներով: Ուրախալի էր, որ Դանիել Վարուժանի անվ. միջ. դպրոցի երեխաները հարգանքի երթով դահլիճ մտան ու ասմունքով միացան բեմում ներկա դերասաններին: Բեմում, օրվա պատասխանատու ռեժիսոր Գոռ Ղազարյանը ջանացել էր ստեղծել մի այնպիսի մթնոլորտ, որը համահունչ էր Վարուժանի բանաստեղծական տողերին՝ եղեգան փողից բոց ու ծուխ էր դուրս գալիս ու արտաբերվում «ուզեն թե չուզեն հայը պիտի ապրի...»:**

## Խորեն Աբրահամյանը կլիներ 80 տարեկան



**Ապրիլի 1-ին մարդաշատ էր Կոմիտասի անվան այգին, որտեղ իրենց վերջին հանգրվանն են գտել մեր մեծերը: Պանթեոնի մուտքի երկու կողմերում ծաղիկները ձեռքներին շարվել էին Երեւանի Գայի անվան թիվ 129 դպրոցի աշակերտները, որոնք առավոտյան արդեն մի հրաշալի ցերեկույթ էին նվիրել մեր շատ սիրելի դերասան, հայ բեմի մեծ արտիստ Խորեն Աբրահամյանի ծննդյան 80-ամյակին ու նաեւ դպրոցի «Ջահ» ամսագրի վերջին համարը: Մեր Խորենը, որն իր ողջ ստեղծագործական կյանքում խուսափել է ցուցադրական մեծարումներից, հանդեսային ձոներից, չկարողացավ իր ծննդյան 75-ամյակը նշել իր երազած «Առաջին սիրո երգը 50 տարի անց» ներկայացման բեմականացմամբ:**

**Արվեստագետների, արվեստասերների հոսքը գնալով շատանում էր Պանթեոնում ու իրար լրացնելով հիշատակի ջերմ ու գնահատանքի խոսքեր էին հնչեցնում Խորեն Աբրահամյան անկրկնելի դերասանի հասցեին Երվանդ Ղազանչյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Վարդուհի Վարդերեսյանը եւ ուրիշներ: Աբրահամյանի դերակատարումները բեմում, կինոյում, հեռուստաթատրոնում դարձել են սերունդների ժառանգությունը եւ ուսուցողական բնույթ են կրում: Հիշենք միայն մի քանիսը՝ Արսենը «Առաջին սիրո երգը», Գեւորգը՝ «Սարոյան եղբայրներ», Պավլեն՝ «Մենք ենք, մեր սարերը» եւ այլն: Իսկ Աբրահամյանի Համլետը հայկական թարգմանական ֆիլմադարանում գրանցվեց ոսկե տառերով:**

ՔԱՅԱԼԵՐԵԼՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

## Շարունակվում է «XXI-ի հեռանկարներ» 11-րդ երաժշտական փառատոնը

**Ապրիլի 2-ին ժամը 19-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, CONVERGENCE հասուկ ծրագրի շրջանակներում հանդես կգան 4 հայ եւ օտարազգի երիտասարդ կոմպոզիտորներ՝ պատվիրված ստեղծագործություններով: Շվեյցարական Aquatour եւ Pre-art խմբերի կատարմամբ: Ինչպես նշեց Pre-art խմբի եւ ծրագրի ղեկավար Մաթիաս Արթերը, շվեյցարական կազմակերպությունը համագործակցում է երիտասարդ կոմպոզիտորների հետ, նրանց հնարավորություն տալով հասնել միջազգային ճանաչման: Մրցույթում հաղթողները հանդես են գալիս աշխարհի տարբեր երկրներում, հրավիրվում են մի քանի ամիս Շվեյցարիա ու այդ ընթացքում ստեղծագործում:**

**Ինչպես տեղեկացրեց փառատոնի նախագահ եւ ղեկավար, կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանը, «անկախ նրանից, որ ծրագրում ընդգրկված են հարեւան երկրներից երիտասարդ կոմպոզիտորներ, սակայն մեր նպատակն է մեր հայ երիտասարդներին, որոնք ուսանել են հայրենիքում, բայց ապրում են դրսում, ներկայացնել հայ հանրությանը, աջակցել նրանց հետագա ծրագրերում»: Այսօրվա համերգի ընթացքում կհնչեն հայ կոմպոզիտորներին պատվիրված եւ մրցույթում հաղթած ստեղծագործություններ, օտարազգիների հետ համատեղ: Իսկ հայ երիտասարդ կոմպոզիտորները՝ Արման Ղուշչյան, Արամ Հովհաննիսյան, Արթուր Աճեմյան եւ Արթուր Ավանեսով, հասցրել են օտար ափերում ճանաչողության հասնել: Համերգին կհնչի նաեւ կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանի «Տաղ հրեշտակային» ստեղծագործությունը՝ պատվիրված նույն խմբի կողմից 2001 թվականին:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# «Արսենալը» պատվով դուրս եկավ դժվարին կացությունից

Լոնդոնի «Էմիրեյթս» մարզադաշտում կայացած «Արսենալ»-«Բարսելոնի» հանդիպումն իր դիտարժանությամբ, պայքարի արտակարգ լարվածությամբ ու անկանխատեսելիությամբ չեմպիոնների լիգայի ընթացիկ մրցաշրջանի ամենահետաքրքրական մրցախաղն էր: Հենց խաղասկզբից «Բարսելոնի» ֆուտբոլիստները գրոհների այնպիսի տարափ էին ստեղծել «Արսենալի» դարպասին, որ թվում էր, թե դաշտի տերերը չեն դիմանա նման ճնշմանն ու խոշոր հաշվով կպարտվեն:



Առաջին խաղակեսում հյուրերը գոլային մի շարք պահեր ստեղծեցին, սակայն այդպես էլ հաշիվը չբացվեց: Վստահ էր գործում դաշտի տերերի դարպասապահ Մանուել Ալմունիան: Այնուամենայնիվ, ընդմիջումից հետո Զլատան Իբրահիմովիչը ընդամենը 13 րոպեում 2 անգամ գրավեց «Արսենալի» դարպասը: Թվում էր, թե «Բարսելոնի» հաղթանակն ապահովված է, սակայն «Արսենալի» ֆուտբոլիստներն աչքի ընկան մարտական բնավորությամբ, կամային հատկանիշներ դրսեւորեցին ու փրկեցին խաղը Ուոլկոտի եւ Ֆաբրեգասի խփած գոլերի շնորհիվ: Գրանցվեց մարտական ոչ-ոքի (2-2):

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Արսեն Վենգեր («Արսենալ»)** -Խաղասկզբում մենք դժվարին կացության մեջ էինք: Առաջին 20 րոպեներին «Բարսելոնը» մի քանի գոլ կարող էր խփել: Սակայն ի պատիվ մեր ֆուտբոլիստների, նրանք թեւաթափ չեղան եւ շարունակեցին պայքարը: Մեզ դիմագրավում էր հոյակապ մի թիմ: Եթե կամք չդրսեւորեինք, ապա 0-5 հաշվով կպարտվեինք: Միայն ցավում եմ, որ առանց պայքարի 2 գոլ բաց թողեցինք: Ամեն դեպքում հաջողվեց խաղն ավարտել ոչ-ոքի եւ պահպանել մեր մրցակցության ինտրիգը:

**Խոսեպ Գվարդիոլա («Բարսելոն»)**-Նույնիսկ անցած տարի, երբ նվաճեցինք բոլոր տիտղոսները, չեմպիոնների լիգայում երբեք այսքան հաջող չենք խաղացել: Մենք բոլոր հնարավորությունները ունեինք հաղթելու, սակայն չօգտագործեցինք: Հպարտ եմ, թե ինչպես էինք վերահսկում խաղի ընթացքը: Թիմն ամեն ինչ արեց, որպեսզի հնարավորինս մոտենա կիսաեզրափակիչին, սակայն այս փուլում մրցակիցն ուժեղ էր: Համամիտ չեմ այն կարծիքին, թե վերջին 20 րոպեներին մեր թիմի խաղամակարդակն իջավ: Պարզապես հարկավոր էր հավաքված խաղալ: «Արսենալը» դինամիկ թիմ է հիանալի խաղացողներով, որոնք կարողանում են գնդակ պահել: Առաջին խաղակեսում դա նրանց չէր հաջողվում: Գոհ եմ արդյունքից, որ մրցակցի դաշտում 2 գոլ խփեցինք: Սակայն հարկավոր է դասեր քաղել այս խաղից ու առաջիկայում շատ ուշադիր գործել: Եթե «Նոու Կամպ» մարզադաշտում մենք լավ խաղ չցուցադրենք, ապա չեմպիոնների լիգայից դուրս կմնանք:

Քառորդ եզրափակիչի մյուս խաղում Միլանի «Ինտերը» սեփական հարկի տակ հյուրընկալել էր Մոսկվայի ԲԿՄԱ-ին: Հանդիպման ելքը վճռեց իտալացի Միլիտոյի խփած միակ գնդակը: Այս զույգի մրցակցությունում էլ ամեն ինչ կվճռվի պատասխան խաղում:

Մարզիչների կարծիքն այսպիսին է:

**Ժոզե Մոուրինյու («Ինտեր»)**-Ասել էի, որ դժվարին խաղ կլինի: Առաջին խաղակեսը հաստատեց ասածս: ԲԿՄԱ-ն մեծ ուժերով լավ պաշտպանվում էր: Մինչեւ ընդմիջում մեր խաղը չէր ստացվում, իսկ գոլից հետո կարող էինք եւս մի քանի անգամ հաջողության հասնել: Մենք նվազագույն առավելության հասանք, իսկ Մոսկվայում դժվարին պայքար է սպասում: ԲԿՄԱ-ն կարող է անհամեմատ լավ խաղալ, ինչը ռուսներն ապացուցին «Սեւիլիայի» հետ խաղում: Ամեն դեպքում պատասխան խաղում պետք է խաղադաշտ մտնենք վստահ մեր ուժերին, քանի որ ապացուցել ենք, որ կարող ենք լավ խաղալ: Եթե Մոսկվայում գոլ խփենք, ապա կշարունակենք պայքարը:

**Լեոնիդ Սլուցկի (ԲԿՄԱ)**-Ցավոք, հարձակման գծում այսօր մեր խաղը չստացվեց: Նման ճնշման պայմաններում շատ դժվար է ողջ խաղի ընթացքում պահպանել կենտրոնացումը, ուստի գոլ բաց թողեցինք: Ամեն դեպքում, առաջին խաղի հաշիվը մեզ ուղեգիր նվաճելու հույսեր թողնում է: Մոսկվայում կձգտենք ավելի որակյալ խաղ ցուցադրել եւ ամեն ինչ կանենք երկու խաղերի արդյունքով հաղթելու համար:

# Սյուզի Քենտիկյանը նախապատրաստվում է առաջիկա մենամարտին



**Ապրիլի 24-ին թեթեւագույն քաշային կարգում WBA-ի, WIBF-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Սյուզի Քենտիկյանն իր տիտղոսների հերթական պաշտպանությունը կիրականացնի: Այդ օրը նա Համբուրգում կհանդիպի Նադյա Ռաուխի հետ:**

**«Մարդասպան թագուհի» մականունը կրող հայ մարզուհին պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է: Նա արդեն սկսել է նախապատրաստությունն առաջիկա մենամարտին: Սյուզին մարզչի՝ Մագոմեդ Շաբուրովի հետ ուսումնամարզական հավաք էր անցկացնում բարձր լեռնային գոտում, որի ավարտից հետո մարզումները շարունակում է իր համար հարազատ դարձած Համբուրգում: Մարզումների ծրագրում ընդգրկված է նաեւ լողը: Այդ պարապմունքները ղեկավարում է լողի Գերմանիայի հավաքականի մարզիչ Դիրկ Լանգեն: Սյուզիի մարզումներին մասնակցում են նաեւ Շաբուրովի մյուս սաները՝ Ռուսլան Չագաեւը (որի հետ Սյուզին լողավազանում է), Ալեքսանդր Ալեքսեեւը, Իգոր Մախալկինը, Դմիտրի Սարտիսոնը եւ Էդուարդ Գուտկնեխտը:**

## Կրկին խոշոր հաշվով

**Ֆուտբոլի Հայաստանի կանանց ազգային հավաքականն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում պորտուգալական Տոչա քաղաքում խոշոր՝ 0-7 հաշվով հերթական պարտությունը կրեց դաշտի տերերից: Պորտուգալուհիներից հեթ-տրիկի հեղինակ դարձավ Էդիտ Ֆեռնանդիշը, մեկական գոլ խփեցին Սիլվիա Ռեբելոն, Կլաուդիա Նետոն, Սոֆիա Վիեյրան եւ Կարոլե Կոշտան:**

**Ընտրական մրցաշարում մեր մարզուհիները 7-րդ անընդմեջ պարտությունը կրեցին եւ առանց միավորի, գնդակների 1-39 տարբերությամբ եզրափակում են աղյուսակը: Մրցաշարի վերջին հանդիպումը մեր հավաքականը կանցկացնի օգոստոսի 28-ին Երեւանում՝ հյուրընկալելով Պորտուգալիայի հավաքականին:**

## ՀԱՀ-ը հրաժարվել է վճարել Մարադոնային

Հարավաֆրիկյան Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիան հրաժարվել է Արգենտինայի հավաքականին 1,5 մլն դոլար վճարել մայիսին Յոհանեսբուրգում նախատեսված ընկերական հանդիպման համար: ՀԱՀ-ի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Կառլոս Ալբերտո Պարեյրան ցանկանում էր աշխարհի առաջնությունից առաջ փորձամրցում անցկացնել Դիեգո Մարադոնայի սաների հետ: Սակայն երկու երկրների ֆուտբոլի ֆեդերացիաներին չհաջողվեց համաձայնության գալ պարգեւավճարի հարցում:

Մնում է ենթադրել, թե արգենտինացիներն ինչպիսի՞ խոշոր գումար կպահանջեին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից, եթե հնարավոր լիներ անցկացնել Հայաստան-Արգենտինա ընկերական հանդիպումը:

## ՇԱԽՄԱՏ

# Մովսիսյանն առաջին պարտությունը կրեց

**Սան Սեբաստիանի շախմատի մրցաշարի 4-րդ տուրն անհաջող էր Հայաստանի միակ ներկայացուցիչ Կարեն Մովսիսյանի համար, որը սեւերով պարտվեց Արամիս Ալվարեսին: Մյուս առաջատարների միջեւ կայացած պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաղթություն կնքեցին Գլեյզերովն ու Տրասարը, Ալսինան ու Թոմասենը, Պոգորելովն ու Սան Սեգունդոն:**

**4 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով միանձնյա առաջատար դարձավ կուբացի միջազգային վարպետ Արամիս Ալվարեսը: 3,5 միավորով առաջատարին հետապնդում են 13 շախմատիստներ: Մովսիսյանը 3 միավորով 15-րդ տեղում է: 5-րդ տուրում հայ շախմատիստը կմրցի Կառլոս Նավայի հետ:**

# Չեմպիոնի հավակնորդների սկզբունքային մրցավեճը

**Այսօր «Գանձասար»-«Ուլիս», «Փյունիկ»-«Միկա» հանդիպումներով կմեկնարկի ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 2-րդ տուրը: «Հանրապետական» մարզադաշտում ժամը 16-ին սկսվող «Փյունիկ»-«Միկա» հանդիպումը չափազանց մեծ հետաքրքրությամբ է սպասվում: Երկու թիմերն էլ հաջող են մեկնարկել առաջնությունում եւ չեմպիոնի կոչման գլխավոր հավակնորդներն են: Ուստի նրանց մրցավեճը չափազանց կարեւոր նշանակություն ունի մրցաշարի հետագա ընթացքի համար:**

**Անցած մրցաշրջանում էլ «Միկան» «Փյունիկի» գլխավոր հակառակորդն էր ոսկե մեդալի համար պայքարում: «Միկան» նույնիսկ գլխավորում էր աղյուսակը, սակայն վերջնագծում պայքարի լարվածությանը չդիմացավ: Այս տարի թիմն ամրապնդել է իր կազմը: Իսկ ահա «Փյունիկը» կազմի հետ կապված կորուստներ է ունեցել:**

**Ճիշտ է, ՀՀ առաջնություններում փյունիկցիները զգալի առավելության են հասել մրցակցի նկատմամբ՝ տոնելով 18 հաղթանակ, կրելով միայն 3 պարտություն, սակայն այդ վիճակագրությունը դժվար թե որոշիչ լինի այսօրվա մրցախաղում: Հանդիպումը ցույց կտա, թե մրցակիցներից յուրաքանչյուրն ինչի է ընդունակ, ինչ ներուժ ունի:**

# «Դահիճը» կմենամարտի «Վախկոտ նապաստակի» հետ

**Առաջիկա հանգստյան օրերին բռնցքամարտի սիրահարների ուշադրությունը կբեւեռվի երկու մենամարտի: Մանչեսթրում գերծանր քաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյը Ջոն Ռուիսի հետ մենամարտում կփորձի պահպանել իր տիտղոսը, որը խլել էր ռուսաստանցի Նիկոլայ Վալուեւից: Իսկ Լաս Վեգասում ռինգ դուրս կգան նախկին «աստղեր» Ռոյ Ջոնսն ու Բեռնարդ Հոպկինսը:**

**Մենամարտերից առաջ, ընդունված կարգի համաձայն, մրցակիցները մամուլի ասուլիսում ստանձնեցել էին միմյանց: 38-ամյա Ջոն Ռուիզի համար այդ մենամարտը թերեւս վերջին հնարավորությունն է՝ նվաճելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Եթե դա նրան հաջողվի, ապա Ռուիզը կդառնա աշխարհի եռակի չեմպիոն գերծանր քաշային կարգում ու այս ցուցանիշով կհավասարվի Մոհամեդ Ալիին ու Էվանդեր Հոլիֆիլդին: Ես հաղթանակը շնորհել մրցակցիս, եթե նա նույնիսկ ինձանից մի փոքր վատ մենամարտի», նշել է Ջոն Ռուիզը:**

**«Մանկական տարիքից երազել եմ բռնցքամարտի չեմպիոն դառնալ: Բոլորովին վերջերս իրականացրի երազանքս: Ձեզ թվում է, թե այդքան հեշտությա՞մբ կբաժանվեմ իմ տիտղոսից: Այն ինձանից ոչ ոք չի խլի: Վալուեւի հետ մենամարտում հարկավոր էր հաղթել աժդահային, իսկ Ռուիզի հետ մրցամարտում նժարի վրա է դրված չեմպիոնական գոտին,**





**րը մամուլի ասուլիսում ստանձնեցել էին միմյանց: 38-ամյա Ջոն Ռուիզի համար այդ մենամարտը թերեւս վերջին հնարավորությունն է՝ նվաճելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Եթե դա նրան հաջողվի, ապա Ռուիզը կդառնա աշխարհի եռակի չեմպիոն գերծանր քաշային կարգում ու այս ցուցանիշով կհավասարվի Մոհամեդ Ալիին ու Էվանդեր Հոլիֆիլդին:**

**«Ալիի եւ Հոլիֆիլդի կողքին անունս տեսնելը կլինի իմ ամենանվիրական երազանքի իրականացումը: Ամեն ջանք կգործադրեմ հաղթելու համար: Բոլորն էլ գիտեն, որ Հեյը սիրում է ռինգում տեղաշարժվել ու արագ հարվածներ տեղալ: Տեսնենք, թե նրան կհաջողվի՞ 12 ռաունդ փախչել ինձանից: Այս մենամարտն ինձ համար կարեւոր է, որպեսզի բոլորին ապացուցեմ, որ դեռեւս ուժերս չեն սպառվել եւ կարող եմ չեմպիոն հռչակվել: Այդ մենամարտը նաեւ մեծ փորձություն կլինի Հեյի համար, որը կտեսնի իսկական ծանրքաշային բռնցքամարտիկի, որը եկել է հաղթելու: Ինձ չի վախեցնում, որ Հեյին մարզասերները երկրպագելու են: Ընդհակառակը, դա ինձ լրացուցիչ ուժ կտա: Ավելի վատն այն է, որ Անգլիայում կարող ուստի հարկավոր է գործել առանց ռիսկի: Ես ռինգ եմ դուրս գալու, որպեսզի գեղեցիկ ու վստահ հաղթանակ տոնեմ: Գիտեմ, թե որքան լավ բռնցքամարտիկ է Ռուիզը, դիտել եմ նրա մի շարք մենամարտերը: Սակայն իրավունք չունեմ կորցնել տիտղոսը Մանչեսթրում, իմ երկրպագուների աչքի առջեւ», հայտարարել է Հեյը:**

**Լաս Վեգասում էլ մրցակիցները ռեպլիկներ են փոխանակել: Բեռնարդ Հոպկինսը նշել է, որ 17 տարեկանում Ջոնսն իրեն վախկոտի նման էր պահում եւ իրեն ռեւանշի հասնելու հնարավորություն չէր ընձեռում: Նա մրցակցին Զատկի ձու նվիրեց, նշելով, որ ավելի շուտ Ջոնսը հավի է նմանվում: Հոպկինսը խոստացավ ոչնչացնել Ջոնսին, նրան նոկաուտի ենթարկել:**

**«Գիտեմ, որ Հոպկինսը վաղուց էր սպասում այս մենամարտին: Սակայն արդյունքը կլինի այնպիսին, ինչպիսին 1993-ին էր: Բեռնարդին դժվար թե բավարարի մենամարտի արդյունքը, առավել եւս, որ նա ցավ է զգալու: Ես ծանոթ եմ նրա մարտաոճին: Բացի այդ, Հոպկինսն արդեն ծեր է, կարծես 52 տարեկան լինի: Կզարմանամ, եթե 12 ռաունդ դիմանա», հայտարարել է Ռոյ Ջոնսը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ի՞նչ է սփյուռքի հետ երկխոսելու...

1-ին էջից

Բայց տեսեք, որ այդ նույն Քնըքնըզօղլուն հանկարծ ու «ջիգյար» է կտրել, թե. «Նրանք նաեւ մեր երկրի որդիներն են (սփյուռքահայերը-Մ.Խ.), մենք շատ ընդհանուր բաներ ունենք, երես առ երես խոսելը կարեւոր է, նույնիսկ եթե մենք չենք կարող համաձայնության հասնել»: Բայց Թուրքիան, արձանագրությունների գաղափարը խթանելիս հաստատ մտածում էր Ցեղասպանության ճանաչման դեմն առնել այդպիսով, ինչը ոչ միայն չստացվեց, այլեւ կարելի է հանգիստ պնդել, որ ձախողվեց: Հիմա այնպիսի ժամանակներ են, որ ոչ դեսպանների հետկանչն է ազդում երկրների վրա, ոչ տվյալ պետության ապրանքների բոյկոտումը Թուրքիայի կողմից, որ Ցեղասպանությունը չճանաչեն:

Եթե թուրքերի՝ Սփյուռքի հետ երկխոսելու նախաձեռնության մեջ անկեղծություն լիներ, գուցե դրա մեջ ինչ-որ լավ բան կարելի էր փնտրել ու գտնել, բայց կեղծիքի նոր դոզա է հրամցվում պարզապես միջազգային հանրությանը՝ տակետակ ենթատեքստերով:

Ներկայացնենք երեք թերթի խմբագրի կարծիք ու նկատենք այդ կարծիքներում ընդհանրության եզրեր. **Հակոբ Ավետիքյան, «Ազգ».** «Թուրքերն ուզում են մաքսիմում ծրագրով սեպ խրել Սփյուռքի տարբեր հատվածների, Սփյուռքի եւ Հայաստան պետության միջեւ, մինիմումով՝ բոլորին ասել, թե իրենք բաց են, երկխոսում են բոլորի հետ, նույնիսկ «ծայրահեղ» Սփյուռքի հետ են երկխոսում»: Որ Սփյուռքն այդ թեմայով կարող է երկատվելու նոր առիթ ստանալ՝ սա միանշանակ. մի մասն առհասարակ կոնտակտին դեմ կլինի, մյուս մասն էլ կասի՝ դրանից մենք չենք տուժելու, խոսենք, տեսնենք ի՞նչ դուրս կգա: Նոր բանավեճ կզարգանա, մի խոսքով՝ Սփյուռքի փխրուն համաձայնության պատն այս առիթով կարող է սասանվել: Ես դեմ չեմ երկխոսությանը, սակայն պահը, ինչպես նաեւ թուրքերի անկեղծության նկատմամբ կասկածը հուշում են, որ սփյուռքահայերը պետք է խուսափեն այդ ծուղակից»:

«Կալիֆոռնիա կուրիերի» խմբագիր **Հարութ Սասունյանն** ասում է, թե Դավութօղլուն անցած շաբաթ հանդես եկավ մի նոր խորամանկ քայլով՝ նպատակ ունենալով մասնատել սփյուռքահայությանը, քանի որ թուրքերը ցանկալի հաջողությունների չհասան արձանագրությունների միջոցով Սփյուռքը Հայաստանի հետ պառակտելու իրենց փորձում, իսկ այժմ էլ երկխոսության մտադրություն են հայտնում «ողջամիտ սփյուռքահայերի» հետ՝ «նկատի ունենալով այն հայերին, ովքեր պատրաստ են ծախել Հայ դատը իրենց սեփական «եսի» ու անձնական շահի համար»: Սասունյանն էլ կարծում է, որ թուրքական իշխանություններն ամեն ինչ անում են Հայոց ցեղասպանության ճանաչումից այլ երկրներին հետ կանգնեցնելու համար. «Ուստի Հայաստանն ու Սփյուռքը պետք է զգոն եւ միասնական լինեն՝ թուրքական խարդավանքների, գայթակղությունների ու սադրանքների զոհը չդառնալու համար», զգուշացնում է «Կալիֆորնիա կուրիերի» խմբագիրը:

«Ազդակ» ՀՅԴ-ական պարբերականի խմբագիր **Շահան Կանդահարյանը** նույնպես համոզված է, որ «թրքական կանոններուն հետեւող խաղը Հայաստան- Սփյուռք տարանջատելու ընդհանուր քաղաքականութենեն քայլ մը առաջ կանցնի եւ այս անգամ ներսփյուռքյան պառակտումներու համար ուղի կը հարթե»՝ հատկապես նկատի ունենալով, որ թուրքերի հայտարարություններում Սփյուռքը սահմանագծվում է բանակցելի եւ ոչ բանակցելի համայնքների դասակարգմամբ:

Ավելացնենք, որ այսպիսի երկխոսության գաղափարը նաեւ մի փոքր ստվերում է Հայաստան պետությանը, քանի որ կարծես միջպետական հարաբերությունների թիկունքում ինչ-որ խոսակցության մասին է խոսք գնում:

Իսկ ո՞վ է հրահրում այդպիսի երկխոսության գաղափարը, կամ ինչպե՞ս է դա ծագել. չի բացառվում, որ դա հրահրում են շահագրգիռ երկրները՝ բանավեճից ու հայկական շերտերի տարաձայնություններից առավելագույնս քաղելու եւ իրենց շահերն առաջ տանելիս նոր գործիքներ ունենալու համար:

Ասվում է, որ առաջին անգամ է նման բան ձեռնարկվում: Այնինչ 1977 թվականին, Ժնեւում, նախկին պոլսահայ **Շելեֆյանի** նախաձեռնությամբ, նրա իսկ բնակարանում հայ ավանդական երեք կուսակցությունների ներկայացուցիչները հանդիպեցին Թուրքիայի այն ժամանակվա արտգործնախարար Չաղլայանգիլի հետ: Վերջինս շատ անպաշտոն հանգամանքներում հայտարարել էր՝ իբր իր նախաձեռնությամբ է եղել այդ հանդիպումը: Առաջին գրանցված փորձն էր դա փաստորեն, որ սփյուռքահայ ավանդական կուսակցությունների հետ թուրքական պաշտոնական շրջանակի հանդիպում է կայացել: Այդ հանդիպումն անարդյունք է եղել, որովհետեւ Չաղլայանգիլը, ըստ հայ մասնակիցներից երկուսի վկայության, ուզեցել է իմանալ, թե հայերն ի՞նչ են պահանջում. 1975 թվականին արդեն սկսվել էր ԱՍԱԼԱ-ի գործունեությունը: Թուրքիայի արտգործնախարարը հարցրել է. «Արդյո՞ք հատուցման ինչ-որ ձե՞ւ եք մտածում»: Շատ բարյացակամ խոսակցություն է գնացել: Բայց երբ երեքը միաբերան ասել են, որ իրենք պահանջում են Ցեղասպանության ճանաչումն ու հայկական հողերի վերադարձը, այդ ժամանակ Չաղլայանգիլը բավական խիստ եւ լուրջ դեմքով («Ազգի» խմբագրի պատմելով, ով կարդացել է երկու հայ մասնակիցների վկայությունը) ասել է. «Դուք ձեր առջեւ չեք գտնի որեւէ թուրք իշխանություն, որ կգնա այդպիսի համաձայնության ձեզ հետ»:

Իսկ մի քանի տարի առաջ Թուրքիայի արտգործնախարարի օգնականը ԱՄՆ-ում հանդիպել է հայկական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Հ.Գ. Տեղեկատվություն՝ մտորելու համար. վերջերս խոսք է գնում Հայոց ազգային խորհուրդ ձեւավորելու մասին՝ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի, Սփյուռքի ներկայացուցիչներով: Այս կառույցի գործունեությունը հայերի համախմբում է ենթադրում: Փաստորեն հայությանը ներկայացնող այս պահի մարտահրավերներին՝ նաեւ այս կառույցով դիմակայելու խնդիր է դրվում: Արդյո՞ք մի ձեւական կառույց չի լինի, թե՞ կդառնա Հայաստանը եւ Սփյուռքը կապող մի գործիք այս խորհուրդը, ժամանակը ցույց կտա, բայց գոնե այս կարգի խնդիրները, որի մասին վերեւում խոսեցինք, այսպիսի խորհրդով կարելի կլինի քննարկել եւ եզրահանգման գալ:

# «Սփյուռքահայ կազմակերպությունները Էրդողանի հետ հանդիպման հրավեր դեռ չեն ստացել»

Ամերիկայի հայկական համագումարի Հայաստանի եւ Ղարաբաղի գրասենյակների տնօրեն **Արմինա Դարբինյանը** մեծ հույսեր ունի ապրիլի 12-13-ին Վաշինգտոնում կայանալիք հանդիպումից, որին Հայաստանն ու Թուրքիան մասնակցում են նախագահ Օբամայի հրավերով: Ներկայիս հայ-թուրքական հարաբերությունները, նրա մեկնաբանությամբ, գտնվում են ոչ թե փակուղային փուլում, այլ լարված իրավիճակում: «Հուսամ, որ նախագահը Վաշինգտոնում կայանալիք հանդիպման ժամանակ որեւէ լուծում կգտնի ներկայիս լարված իրավիճակը հանդարտեցնելու համար: Պատահական չէ, որ նախագահների հանդիպումն այս օրերին է ծրագրված: Դա խորհուրդ ունի, եւ երեւի գործընթացում քայլ առաջ կգրանցվի», **«Ազգի»** հետ զրույցում ասաց նա:

Երեկ թուրքական լրատվամիջոցները հայտարարություն էին տարածել, որ ԱՄՆ մեկնելու ընթացքում Էրդողանը ցանկություն է հայտնել հանդիպելու նաեւ հայկական սփյուռքի ներկայացուցիչների հետ: Դարբինյանը ճշտել է, որ ԱՄՆ-ում եւ Եվրոպայում սփյուռքահայ որեւէ կազմակերպության, միության պաշտոնական առաջարկություն չի արվել: «Ինձ հայտնեցին, որ սփյուռքի ներկայացուցիչներին հանդիպման հրավերք կամ զանգ դեռ չի արվել: Եթե հայտարարություն արվի, ապա սփյուռքի ներկայացուցիչներն այդ ժամանակ կորոշեն իրենց անելիքը»:

<. <.

## Ուժը կորցրած է ճանաչվել «Գ.Է.Տ-ԳԱԳՈ» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Մարտ 30-ին ԿԲ խորհրդի որոշմամբ ուժը կորցրած (դադարեցված) է ճանաչվել «Գ.Է.Տ-ԳԱԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ ԳԳ-Ե161 լիցենզիայի գործողությունը՝ գրավատան կողմից թույլ տրված գրավատնային գործունեության վերաբերյալ իրավական ակտերի պահանջների մի շարք խախտումների պատճառով:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

## Ուժը կորցրած է ճանաչվել «ՈՍԿԵ ԼՈՒՍԱ» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Մարտի 30-ին ԿԲ խորհրդի որոշմամբ ուժը կորցրած (դադարեցված) է ճանաչվել «ՈՍԿԵ ԼՈՒՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ք. Երեւան, Դավիթ Անհաղթի 21 հասցեում գտնվող գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե192 լիցենզիայի գործողությունը՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սահմանվել է, որ սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտականությունների կատարման հետ:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

М²Ьաֆտաֆ Ш

## ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 30-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ **Արթուր Ջավադյանը,** փոփոխություններ եւ լրացումներ կատարեց «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձեւը եւ ժամկետները» կանոնակարգ 4/03-ում, հաստատեց ՀՀ ԿԲ 2009 թվականի տարեկան հաշվետվությունը, «Ֆինանսական կայունության հաշվետվություն. 2009 թ.» եւ «Հայաստանի ֆինանսական համակարգը 2009 թ. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» նյութերը:

Խորհրդի որոշմամբ գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրվեց «ԱՐ-ՏԱԼ» ՍՊԸ-ին: Ուժը կորցրած ճանաչվեցին «Էվրիա-Միլդ» ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի թիվ 660 եւ թիվ 660/1 լիցենզիաները, ինչպես նաեւ «ՈՍԿԵ ԼՈՒՍԱ» ՍՊԸ գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 192 լիցենզիա՝ իր դիմումի համաձայն, եւ «Գ.Է.Տ-ԳԱԳՈ» ՍՊԸ գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 161 լիցենզիան՝ օրենսդրության խախտումների պատճառով:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*


ACBA-CREDIT AGRICOLE BANK

Р²Ъо²р²раф ВЪаф Ь

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԸ հայտարարում է աճուրդ՝ Բանկի մասնաճյուղերին պատկանող մեքենաների վաճառքի համար: Ցանկացողները կարող են դիմել համապատասխան հեռախոսահամարներով:

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2000թ.
Կատարված վազք՝ 243,100 կմ
Սկզբնական արժեք՝ 800,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0222) 3 32 96
*Բանկի «Կոտայք» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2001թ.
Կատարված վազք՝ 208,700 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0224) 2 27 54
*Բանկի «Եղվարդ» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2002թ.
Կատարված վազք՝ 253,324 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0267) 2 40 11, 2 40 12
*Բանկի «Բերդ» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2000թ.
Կատարված վազք՝ 288,400 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0284) 2 40 18, 2 40 94
*Բանկի «Գորիս» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2002թ.
Կատարված վազք՝ 210,000 կմ
Սկզբնական արժեք՝ 700,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0236) 4 47 66
*Բանկի «Մասիս» մասնաճյուղ*


## Մայրության եւ գեղեցկության տոնը «Ռուսական արվեստի թանգարան»-ում

**2010 թ. ապրիլի 7-ին ժամը 17:00 «Ռուսական արվեստի թանգարանը** /պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու/» հրավիրում է արվեստասեր հասարակայնությանը Մայրության եւ գեղեցկության տոնին նվիրված միջոցառմանը:

Կհնչեն հայկական ռոմանսներ Լիլիթ Պիպոյանի կատարմամբ; Երաժշտանոցի կոնսերվատորիայի լարային քառյակի ելույթը (ղեկավար՝ Է.Ա.Ավագյան):

***Թանգարանի հասցեն՝ Երեւան, Իսահակյան փ., 38:***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ի գիտություն Երեւան քաղաքի լարային ռադիոցանցի բաժանորդների**

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ Երեւանի լարային վերահաղորդիչ ռադիոցանցից օգտվող բոլոր բաժանորդները, սկսած ս.թ. ապրիլի 1-ից, իրենց աբոնենտային վճարները պետք է կատարեն բացառապես «Հայփոստի» կամ «ՎՏԲ-Հայաստան» բանկի բաժանմունքներում, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի Աղայան մ/ճ, թիվ 2474 6011 7994 0080 հաշվեհամարին:

Կոնտակտային հեռախոս՝ 010 53 44 12

*«ՀՀՌՑ» ՓԲԸ ադմինիստրացիա*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության տնտեսական ապահովման եւ սպասարկման բաժնի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման բաց մրցույթի /Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

**ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**

Փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքների իրականացում, իր լիազորությունների իրականացման հետ կապված իրավական ակտերի եւ այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքների իրականացում, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների կատարում, անհրաժեշտ նյութերի եւ տեղեկատվության նախապատրաստում, անցագրային ռեժիմի փաստաթղթերի ձեւակերպում:

**ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.**

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «15» ապրիլի 2010թ.:

Մրցույթն անցկացվելու է «30» ապրիլի 2010թ. ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

www. azg.am



Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: